

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ո՛ւր Կրնայ Հասնիլ Թրամփի Պաշտոնագրկման Գործընթացը

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տունէն ներս կը շարունակուին նախագահ Տոնալտ Թրամփի պաշտոնագրկման գործընթացները:

Ամիս մը առաջ ի յայտ եկաւ ազդարար մը, որ պաշտօնեայ է Ազգային Ապահովութեան Գործակալութեան համակարգէն ներս: Ան տեղեկանալով Թրամփի եւ Ուքրաինայի նախագահ Վոլոտեմիր Զելենսքիի միջեւ տեղի ունեցած հեռաձայնային խօսակցութեան մանրամասնութիւններուն, դիմած է իր վերադասներուն մտահոգութիւն յայտնելով, որ նախագահը կը չարաշահէ իր պաշտօնը, իր քաղաքական հակառակորդներուն դէմ հետաքննութիւն ապահովելու համար:

Անանուն ազդարարը չկարողանալով իր պատկանած կառոյցին միջոցաւ արդիւնքի հասնիլ, իր մտահոգութիւնները փոխանցած է Գոնկրէսի Հետախուզական Յանձնարարութեան, որու ղեկավարն է Ատամ Շիֆ: Այս տեղեկութեան ի յայտ գալը ստիպեց Սպիտակ Տունը հրապարակելու Թրամփ-Զելենսքի խօսակցութեան բովանդակութիւնը, ուր բացայայտ կը դառնայ որ, Գոնկրէսի կողմէ Ուքրաինայ յատկացուած 400 միլիոն տոլարի զէնքերու մատակարարումը, Թրամփ կը պայմանաւորէ նախկին փոխնախագահ եւ ամս նախագահի թեկնածու ճօ Պայտընի եւ անոր որդւոյն դէմ հետաքննութեամբ, ինչպէս նաեւ 2016 թուականի ընտրութիւններու հետ կապուած հարցերով:

Ամերիկեան օրէնքներով կ'արգիլուի քաղաքական հակառակորդներուն դէմ օտար երկիրներու օժանդակութեան դիմելը: Գոնկրէսի Դեմոկրատ մեծամասնութիւնը Թրամփի այս արարքը նկատելով պաշտօնի չարաշահում, անմիջապէս նախաձեռնեց նախագահի պաշտօնագրկման գործընթացին: Այժմ այս ուղղութեամբ տեղի կ'ունենայ վկայներու հարցաքննութիւն: Կը սպասուի որ, առաւելագոյնը մէկ ամսուայ ընթացքին Ներկայացուցիչներու Տունը քուէարկէ Թրամփի պաշտօնագրկման որոշումը, որ առաջին քայլն է նախագահը պաշտօնէն հեռացնելու ուղղութեամբ: Վերջնական որոշումը կը պատկանի Օբերակոյտին, ուր տեղի կ'ունենայ հրապարակային դատավարութիւն: Նախագահը պաշտօնէն հանելու համար կը պահանջուի Օբերակոյտի 100 անդամներէն երկու երրորդի հաւանութիւնը: Այսօրուայ դրութեամբ Օբերակոյտէն ներս դրական որոշումը կը նկատուի խիստ անհավանական, նկատուի ունենալով որ Գոնկրէսի այդ պալատէն

Թրամփ Թուրքիոյ Դէմ Զօգտագործեց Հայոց Ցեղասպանութիւնը Գանչնալու Մահակը. Newsweek

Թուրքիոյ յարձակումը Սուրիոյ վրայ կանխելու նպատակով ԱՄՆ-ի նախագահին տրուած խորհուրդներէն մէկուն համաձայն՝ պէտք էր վախճնել Անգարան, որ Միացեալ Նահանգները կը ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը: Այս մասին Newsweek հանդէսին ըսած է ԱՄՆ-ի Ազգային Անվտանգութեան Խորհուրդի պաշտօնեաներէն մէկը:

Պաշտօնեան յայտնած է, որ Տանըլտ Թրամփի խորհրդականները նախագահին շարք մը տարբերակներ ներկայացուցած են, թէ ինչպէս դուրս բերել ամերիկեան զօրքերը Սուրիայէն, միաժամանակ թոյլ չտալով Թուրքիոյ ներխուժումը Սուրիա: Սեղանին դրուած մարտավարութիւններէն մէկով առաջարկուած է սպառնալ Անգարային, որ Օսմանեան կայսրութեան մէջ միլիոնաւոր հայերու եւ այլ ազգային խումբերու անդամներու կոտորածները կը ճանչցուին ցեղասպանութիւն, յայտնած է Ազգային Անվտանգութեան խորհուրդի պաշտօնեան:

Բացայայտուած այս տեղեկատուութեան առիթով Newsweek-ը լայնօրէն անդրադարձած է Հայոց ցեղասպանութեան թեմային, նշե-

լով, որ 1915-1923 թուականներու ընթացքին մէկուկէ միլիոն հայերու, հարիւր հազարաւոր յոյներու ու ասորիներու կոտորածները ցեղասպանութիւն ճանչնալու հարցը միջազգային յարաբերութիւններու վիճարկոյց թեմաներէն մէկն է: Օսմանեան կայսրութեան իրաւաջորդ ժամանակակից Թուրքիան կը պնդէ, որ ազգային փոքրամասնութիւնները համակարգային կերպով ոչնչացնելու գործընթաց է եղած, սակայն աւելի քան երեք տասնեակ երկիրներ ու կառավարութիւններ ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը եւ պաշտօնապէս յայտարարած այդ մասին:

ԱՄՆ-ը չէ միացած այդ երկիրներուն, դաշնային մակարդակով որեւէ օրէնք չէ ընդունուած, սակայն 50 նահանգներէն 49-ը՝ բացառութեամբ Միսիսիպիի, ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը:

Քիւրտերը հիմա կը պնդեն, որ Թուրքիան իրենց նկատմամբ ցեղասպանութեան քաղաքականութիւն կը վարէ, կը շարունակէ պարբերականը՝ վերադառնալով Սուրիոյ խնդիրներուն:

Վիթալի Բալասանեանը Ընելիք չունի. Արմէն Գրիգորեան



Հայաստանի Ազգային Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

Արցախի Անվտանգութեան խորհուրդի նախկին քարտուղար Վիթալի Բալասանեանի վարքագիծը եւս մէկ անգամ ցոյց կու տայ, որ ան որպէս քաղաքական գործիչ ընելիք չունի: «Ազատութեան» տուած հարցազրոյցի ժամանակ այս մասին յայտարարած է Հայաստանի Ազգային Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը:

«Իրականում այս պահին Վիթալի Բալասանեանի տուած հարցազրոյցը եւ յայտարարութիւնները իրաւապահ մարմինների գործունէութեան շրջանակներում են, բայց ես կարող եմ ասել, որ նման վարքագիծը եւս մի անգամ ցոյց է տալիս, որ նա որպէս քաղաքական գործիչ անելիք չունի: Եւ էս առումով կարող ենք էս էջը փակած համարել, որովհետեւ չի կարող 70 տոկոս ձայն ստացած քաղաքական ուժի մասին նման յայտարարութիւններ անել, նոյնիսկ տրամաբանութիւնը՝ քաղաքական տրամաբանութիւնը, տարրական տրամաբանող ցանկացած քաղաքական գործիչ որեւիցէ նման յայտարարութիւններ երբեք չէր անի:

Պատասխանելով այն հարցի, թէ, ոմանց կարծքով կուտան հերոսի մասին նման արտայայտութիւններ ունենալը չիշղ չէ, Գրիգորեան ըսած է. «Որ ժամանակաշրջանում Վիթալի Բալասանեանը հերոս է եղել, էդ ժամանակաշրջանի մասին ես որեւիցէ բան չեմ ասել: Եւ մի տեսակ մեր մօտ բան է դարձել, որ պատերազմին մասնակցութիւնը ներուժ է: Արդեօք երբ որ ես չեղափոխութեանը մասնակցել եմ, ես իրաւունք ունեմ, օրինակ, օրէնք խախտելու, այլ վարքագիծ դրսեւորելու: Ես մտածում եմ, որ եթէ ես չեղափոխութեանը մասնակցել եմ, ես աւելի մեծ պատասխանատուութիւն ունեմ, եւ եթէ ես չեղափոխութեան յայտարարած սկզբունքներին հա-

Թուրքերու Ռազմական Գործողութիւնը Փայլանը Որակած է Տեղահանութիւն Եւ Ցեղասպանութեան Փորձ

Թուրքիոյ ընդդիմադիր քրտամէտ «Ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան» (ԺԴԿ-ՀԺԴ) Տիարպէքիլէն ընտրուած հայ պատգամաւոր Կարօ Փայլանը խորհրդարանի լիագումար նիստին ընթացքին անդրադարձած է Թուրքիոյ կողմէ Սուրիոյ հիւսիս-արեւելքը իրականացուող «խաղաղութեան ակունք» ռազմական գործողութեան:

Փայլանը նշած է, որ այն, ինչ կ'ընէ Թուրքիան Սուրիոյ մէջ, տեղահանութիւն է եւ ցեղասպանութեան փորձ՝ ըստ ՄԱԿ-ի սահմանումներու:

«Ժողովրդագրութեան հետ խաղալը յանցանք է: Իսրայէլն ալ նոյն փաստարկներով կը զաւթէ Պաղեստինի տարածքները», - ըսած է Փայլանը:

Փայլանի այս ելույթը բուն քննարկումներու տեղիք տուած է խորհրդարանի իշխող կուսակցութեան եւ վերջինիս հետ դաշինք կազմած աջակողմեան «Ազգայնական շարժում» կուսակցութեան (ՄԻՔ-ԱՃԿ), ինչպէս նաեւ ընդդիմադիր ազգայնական «Լաւ» կուսակցութեան խմբակցութիւններուն մօտ:

Իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան



Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլան

խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Օզլէմ Զենկինը Թուրքիոյ ռազմագործողութեան եւ իսրայէլի կողմէ Պաղեստինի գրաւման միջեւ համեմատութիւն ընելու համար խստօրէն դատապարտած է Փայլանի ելույթը:

Անոր խօսքով՝ տարածաշրջանը նման վիճակի յանգեցուցած է «Քիւրտիստանի բանուորական» կուսակցութիւնը: Ինչ կը վերաբերի հայ պատգամաւորի կողմէ

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ալիեւն Ահազանգել է Նախիջեւանի Օտարման Մասին

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Անցեալ շաբաթ Պաքուում տեղի ունեցած Թրքալեզու պետութիւնների վեհաժողովը հայաստանեան տիրոջութում մեծ ուշադրութեան արժանացաւ Զանգեզուրի վերաբերեալ Ալիեւի յայտարարութիւնների բերումով: Ալիեւը յայտարարեց, թէ Զանգեզուրը անշատում է Թուրքական աշխարհը: Ատրպէյճանի նախագահն առաջին անգամը է, որ անուամ է Զանգեզուրի վերաբերեալ չափափոխ տրամադրութիւն: Նա այդ գործին է արդէն տարինը շարունակ, ընդհուպ Երեւանի առումով: Դա իհարկէ էլ նշանակում, որ Ալիեւի յայտարարութիւններն արժէ բաց թողնել: Խնդիրն այն է, որ այստեղ Հայաստանի եւ հայութեան համար ոչ միայն որեւէ նորութիւն չի կարող, այլ անգամ Ալիեւի լուծութեան պարագայում Հայաստանն ու հայութիւնը չեն կարող չզննատել, որ Զանգեզուրը եւ ընդհանրապէս հայկական պետականութիւնը մշտապէս գտնուելու են թուրք-ատրպէյճանական տանդեմի թիրախում: Ըստ այդմ, այստեղ կայ պետականութեան անվտանգային մարտահրաշխաների ռազմավարական գնահատման հարց, որը Հայաստանի համար ամենեւին չի կարող լինել նոր մարտահրաշխան էլ, այն մշտական է:

Այստեղ սակայն, զուտ իրավիճակի շերտային դիտարկման պարագայում արժէ նաեւ ուշադրութիւն դարձնել որոշ առանձին հանգամանքներ: Յատկանշական է, որ Ատրպէյճանի նախագահը խօսել էր Ատրպէյճանից Զանգեզուրով Նախիջեւանի անջատուածութեան մասին: Առաջին հարցահարկէն հետքից Միւսիքի թիրախաւորման հանգամանքից զատ, այստեղ թերեւս պէտք է նկատել Նախիջեւանի մասին Ալիեւի որոշակի մտահոգութիւն: Ատրպէյճանի նախագահը ընդգծում է «մայր Ատրպէյճանից» Նախիջեւանի կտրուածութիւնը, այն պարագայում, երբ Նախիջեւանը կարծես թէ բաւական «յուսալիրօքն» կապուած է «հայր թուրքիայի» հետ:

Բայց, հենց դա է նաեւ, որ մտահոգութեան բաւականին թափանցիկ տողատակով նշմարում է Ատրպէյճանի նախագահի յայտարարութիւններում: Ալիեւը գործնականում ազդարարում է, կամ ընդգծում, որ Նախիջեւանն այլեւս չի պատկանում Ատրպէյճանին: Այն պատկանում է Թուրքիային: Ու թէեւ թուում է, որ այստեղ խօսքն ընդամենը վստահելի «աւագ եղբոր» մասին է, սակայն Ատրպէյճանի նախագահն ակնյայտօրէն ունի մտահոգութիւն, որ չափազանց բարդ աշխարհադաբական խաղի մէջ մտած էրտողանը՝ որ մի կողմից չի կարող կանգ առնել, միւս կողմից առաջ գնալով կարող է աւելի ու աւելի խրոնել, ի վերջոյ կարող է ելք տեսնել Նախիջեւանի հարցում որեւէ այլապիսի պայմանաւորուածութիւն, որը կարող է տհաճ անակնկալ լինել Պաքուի համար:

Հայաստանն իսկապէս պէտք է լինի բաւականին աշխուրջ մասնաւորապէս նաեւ Նախիջեւանի հարցում, բայց ոչ միայն մարտահրաշխանների դիմակայելու, այլ նաեւ հնարաւորութիւններ բաց չթողնելու համար:

«ԼՐԱԳԻՐ»

Նոր Հայաստանում Ամենամտահոգիչը Պաշտօնեաների Գործելաճն է

Իւրաքանչիւր յեղափոխութիւնից յետոյ ամենամեծ վտանգներից մէկը սիւս կազմաւորման քաղաքականութիւն է: Բոլոր պաշտօնեաների աշխատանքը սիւս կազմաւորման համար: Յեղափոխութիւնը ենթադրում է, մի կողմից, անցեալի գոյքազրուծ, իսկ միւս կողմից՝ ապագայի նախագծում: Եւ այստեղից հարց է առաջանում. ովքեր պէտք է լինեն այդ գոյքազրուծները եւ մեր ապագան նախագծողները:

Փաստ է, որ իւրաքանչիւր շարժումը գործի ստուերում մարդ է կանգնած:

Իսկ շարժումութեան հասնում են մասնագիտական բարձր հմտութիւններ, փորձ, շրջահասցութիւն ու տեսլական ունեցող անհատները:

Նոր Հայաստանում երբեմն ակնհայտ է ենք լինում պետական պաշտօնեաների արհեստավարութեան ակնյայտ դիֆիցիտի տարրերի:

Այսօր ՀՀ քաղաքացիներ իրաւատէք է, քաղաքական գործընթացների հանդէպ ուշադիր է ու պահանջատէք, ձեւաւորում է դիրքորոշում ու ստեղծում հակասական տրամադրութիւններ իշխանութեան նկատմամբ:

Վերլուծելով տեսնում ենք, որ Նոր Հայաստանում ամենամտահոգիչ ու հրաշալիքնուղ տրամադրութիւնները կապուած են հենց պաշտօնեաների կառավարման հմտութիւնների բացակայութեան, իսկ երբեմն էլ պարզապէս մասնագիտական որակների լուրջ բացակայութեան հետ: Պէտք է մտահոգուել այս ազդանշաններով, քանի որ մտահոգութիւնների անտեսումը չդի է լուրջ վտանգներով: Կործանիչ է, այն գաղափարը, որ որոշ ներկայ պաշտօնեաներ փորձում են սեփականացնել յեղափոխութիւնը սեւ ու սպիտակի պայքարի ռազմավարական շրջանակի մէջ ընկնելուց, ինչն այլ բան չի նշանակի, քան տեղապտոյտ քաղաքական իմաստով:

Իսկ Հայաստանին, հանրային-քաղաքական արդիւնաւէտ համակարգի ձեւաւորման հեռանկարում անհրաժեշտ է հենց իշխանութիւնը դիմադրողութիւն բաժանման, սահմանազման, սահմանազատման այլ տրամաբանութիւն, ներքաղաքական գործընթացի նոր իմաստաւորում, կամ պայմանականօրէն՝ իսկապէս երրորդ ճանապարհ, եւ աւելի շուտ՝ երրորդ տարբերակ, որովհետեւ գործնականում խօսքը երկրորդ ճանապարհի մասին է՝ սեւ-սպիտակ բաժանման փոխարէն այլ տրամաբանութեամբ քաղաքական սահմանազատման անցնելը: Տուեալ պարագայում, Հայր թուրքի մասեսանի գործում արտացոլում է այդ խորքային խնդիրը, կամայ թէ ակամայ բացայայտելով Հայաստանում իսկապէս ներքաղաքական նոր իմաստների լուրջ դեֆիցիտը կամ հանրային մատուցման մեծ բացը: Հայաստանի քաղաքական ապագան կարող են կերտել այն սուբեկտները, որոնք կը կարողանան լրացնել այդ բացը:

խութիւնը՝ համարելով այն անձնական ձեռքբերում:

Յետեղափոխական պաշտօնեաները պէտք է հասկանան ու չիչեն բուժեբանային էֆեկտը, որ մարդկանց յուսախաբութիւնը այսքան շունդալից ու սպասուած չաղթանակից յետոյ ապտակ կը հասցնի ողջ Հայաստանին:

Պետութեան կառավարման համակարգը դեկավարող անձինք պէտք է լուրջ ու կշռադատուած կազմաւորման նշանակուածներ անեն:

Ակնյայտ է, որ անհարիր կը դառնայ իրագործել յետ յեղափոխական Հայաստանում, միայն եթէ իւրաքանչիւր պտտեցիալ պաշտօնային նշանակում համալիր «հետագոտութիւն» անցնի՝ սկսած մարդկային որակներից, մասնագիտական կրթութեան համապատասխանութիւնից, վերջացած տարրական հմտութիւններից: Այսօր ակնհայտ է, որ լինում ոչ միայն այս որակներից զուրկ պաշտօնեաների նշանակումների, այլ նաեւ անգամ օրէնքով ամրագրուած պարտադիր պայմանների չբաւարարող նշանակումների:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը Հայաստանում արժեւորեց ՀՀ քաղաքացուն, նրան վերագործարեց սեփական իշխանութիւնը ընտրելու իրաւունքը, սակայն ՀՀ քաղաքացու յեղափոխութիւնը սեփականացրած որոշ պաշտօնեաներ իրենց փնթի ու ոչ շրջահայաց աշխատանքի արդիւնքում մսխում են վստահութեան ու հաւատի այն կրեդիտները, որ Հայաստանի քաղաքացիներ տուել է Նիկոլ Փաշինեանին:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Հետաքրքիր Իրավիճակ Զրոյ Թովմասեանի Գործում. Երկուստեք Դժգոհութիւն ԱՐԱՍ ԱՍՏՈՒՆԻ

Սահմանադրական դատարանի նախագահի շուրջ ստեղծուած իրավիճակում առկայ է հետաքրքիր իրադրութիւն: Բանն այն է, որ իրադրութիւնը դժգոհութիւն է առաջացնում երկու կողմում էլ՝ թէ՛ նախկին իշխող համակարգի, որտեղ մեղադրանքներ են հնչում թովմասեանի դէմ իշխանութեան քաղաքական հետապնդման վարկածով, թէ՛ նաեւ իշխանութեանն աջակցող ուժերից եւ նաեւ հենց իշխանութեան մէջ եղած որոշակի շրջանակներից, որոնց քննադատութեանն է արժանանում թովմասեանի հարցը լուծելու ընտրուած մեթոդաբանութիւնը եւ ճանապարհը, ու որոնք պահանջում են աւելի արմատական լուծումներ:

Փաստօրէն ստացւում է, որ քաղաքական իշխանութիւնն այդ իմաստով ընտրել է որոշակի երրորդ ճանապարհ, թէկուզ պայմանականօրէն, յամենայնդէպ դատելով թէ՛ յեղափոխութեան աջակցութեան, թէ՛, այսպէս կոչուած, «հակաօրէնութեան» ճամբարից եկող քննադատութիւնը կամ դժգոհութիւնը: Այդ իրողութեան ներքոյ թերեւս ուրուագծում է հայաստանեան յետհեղափոխական իրականութեան համար առանձնալատուկ մի երեւոյթ՝ քաղաքական դիմակայութեան խնդիրը, իշխանութիւն-ընդդիմութիւն բաժանման խնդիրը, այդ իրողութեան, իհարկէ, ամենեւին ոչ սեւ ու սպիտակ տրամաբանութեամբ:

Ի վերջոյ, ամբողջ խնդիրն այստեղ հենց այն է, որ երկկողմ դժգոհութիւնը փաստացի ստեղծում է սեւ ու սպիտակ որոշակի իրավիճակ, եւ թէկուզ պայմանականօրէն, բայց ստացւում է դժգոհութիւն հենց այն հանգամանքից, որ մի կողմից կայ թովմասեանի դէմ քայլերի շարք, միւս կողմից՝ այդ շարքը ամբողջապէս չի տեղաւորուում սեւ ու սպիտակի տրամաբանութեան մէջ: Ահա այդ առումով, տողատակում դժգոհութիւնը՝ երկուստեք դժգոհութիւնը թերեւս բխում է այն իրողութիւնից, որ Հայաստանում կայ քաղաքական ուժերի մի «պլեադա», որն իր, այսպէս ասած, կենսական էներգիան, կենարար ուժը, իր քաղաքական իմաստաւորումը այլ բանից չի ստանում, քան ներքաղաքական գործընթացների բացարձակ սեւ ու սպիտակ տրամաբանութիւնից: Մինչդեռ, յետեղափոխական քաղաքական զարգացումների խորքային հարցերից մէկն էլ այն է, որ հանրութիւնը կարողանայ խուսա-

Յրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնետիր հոն արտայայտուող բոլոր միտքերը



ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱՉԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խորհրդարանն Երևուստուն Կուսակցություններու Մասին Օրենքի Բարեփոխումների Վերաբերեալ

Խորհրդարանն Երևուստուն կայացած են «Կուսակցություններու մասին» սահմանադրական օրենքի շուրջ: Օրենսդրական փոփոխություններու աշխատանքային խումբի համակարգող, իշխանական «Իմ քայլը» խմբակցության պատգամաւոր Համագասպ Դանիելեանը ըսած է թէ, իրենք պէտք է փոխեն անցեալին հաստատուած խաղի կանոնները, երբ կուսակցութիւն մը տեւական ժամանակ կը ձգտէր բոլոր միջոցներով հաստատել իր իշխանութիւնը: Պատգամաւորի խօսքով՝ այդ գործընթացի կարեւոր մաս կը կազմէ նաեւ կուսակցութիւններու մասին օրենքի փոփոխութիւնը:

«Մենք օր առաջ պէտք է փորձենք բարելաւել, հասկնալ նաեւ վերափոխել կուսակցութիւնների հետ կապուած կարգաւորումները», - ըսած է Համագասպ Դանիելեանը:

«Լուսաւոր Հայաստան» խմբակցութիւնը կ'առաջարկէ բարձրացնել կուսակցութիւններուն տրամադրուող ֆինանսաւորումը: Բացի այդ, «Լուսաւոր Հայաստանի» պատգամաւոր Կարէն Սիմոնեանը ըսած է՝ պէտք է փոխել նաեւ սկզբունքը, թէ մասնաւորապէս որ կուսակցութիւններուն կը տրամադրուի նիւթական աջակցութիւն:

«Զուտ կուսակցութեան գոյութիւնը դեռեւս չի դիտարկուած, որ դա պէտք է ունենայ պետական աջակցութիւն, հը կուսակցութիւնը պէտք է ապացուցի, որ ինքը կենսունակ է, մասնակցի ընտրութիւններին, ունենայ հանրային աջակցութիւն», - նշած է Կարէն Սիմոնեանը:

Սիմոնեանը: «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Սերգէյ Բագրատեանն ալ կողմնակից է, որ կուսակցութիւններուն հնարաւորութիւն ունենան նիւթական աջակցութիւն տրամադրել նաեւ գործարար դաշտի ներկայացուցիչները:

«Էջովկիապէս մաքուր արտադրութեամբ զբաղուող ընկերութիւնը, բնականաբար, կը ցանկանայ ֆինանսաւորել այն քաղաքական ուժին, որի համար բնապահանջութիւնն առաջնահերթութիւն է, եւ սա կը լինի պարզ տրամաբանութեան մէջ, որ իմ գաղափարակիցն է, ես իմ պիզնեսով այս գաղափարները զարգացնում եմ», - ընդգծած է Բագրատեանը:

Իշխանական «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր Համագասպ Դանիելեանն ալ կը կարծէ, որ այսօր Հայաստանի մէջ հանրային պահանջը այլ է՝ պիզնեսը եւ քաղաքականութիւնը տարանջատել պէտք է:

«Շահույթ հետապնդող կազմակերպութիւնը անձ չի, որպէսզի ունենայ քաղաքական իրաւունքներ, դրանք հո կուսակցութիւն չեն ստեղծուած, ինչո՞ւ պէտք է կուսակցութիւն ֆինանսաւորեն, դա քաղաքացու իրաւունքն է, քաղաքացու քաղաքական իրաւունքի մաս է կազմում ոչ միայն ստեղծել, մասնակցել, այլ նաեւ իր նիւթական միջոցներով, իր ժամանակով եւ այլ միջոցներով նպաստել իր նախընտրած կուսակցութեան առաջ մղմանը», - ըսած է Դանիելեանը:


Երբ Կ'ըսենք՝ Փողի Խնդիր Չունինք, Չի Նշանակեր, որ Կրնանք Դուրս Գալ եւ Ուղղակի Փողը Բաժնել. Փաշինեան

Ես ըսած եմ, որ մեր ամենամեծ խնդիրը մեծ ծախսերն են: Այս մասին կառավարութեան նիստի ժամանակ յայտարարած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Բայց անցած տարուայ ժամանակահատուածի համեմատ՝ այս տարի շատ աւելի մեծ ծախսեր ենք արել, բայց մեր սահմանած նշաձողին չենք կարող հասնել, քանի որ նաեւ բարձր որակական չափանիշներ ենք դնում: Եթէ աչք փակենք այդ չափանիշների վրայ, գուցէ կատարենք եւ գերակատարենք էլ», - ըսած է ան:

Վարչապետը նշած է, որ կը հաստատէ իր անցեալին ըրած այն յայտարարութիւնը, թէ փողի խնդիր չունինք, ինչը նաեւ քաղաքական շահարկումներու առիթ կու տայ:

«Բայց երբ ստուծ ենք, որ մենք փողի խնդիր չունենք, դա չի նշանակում, որ ունենք փող, որ դուրս գանք ու ուղղակի բաժանենք: Այդ դէպքում փողի արժէքը



կ'ընկնի, այսինքն՝ կ'արժեզրկուի: Երբ ասում ենք չունենք փողի խնդիր, նկատի ունենք կարեւոր ներդրումներ անելու համար», - ըսած է Փաշինեանը՝ յաւելելով, որ ինը ամիսներու ընթացքին պիտու է կեամտային մասը աւելցած է 21,6 տոկոսով:

«Մենք ռազմավարութեան վրայ աշխատում ենք եւ եկել ենք եզրակացութեան, որ հնարաւոր գումարները պէտք է ներգրաւել մեծ ծրագրերի վրայ, որոնք մենք պայմանականօրէն անուանում ենք մեկաձրագրեր, եւ այդ դէպքում գումարը կ'ունենայ արժէք», - ընդգծած է ան:

Վլատիմիր Կարապետեան Անիմաստ կը Համարէ Հրայր Թովմասեանի Նկատմամբ Ծնշումներու Մասին Խօսիլը

Հայաստանի վարչապետի մամլոյ խօսնակ Վլատիմիր Կարապետեանը անհիմն կը համարէ այն յայտարարութիւնները, թէ Սահմանադրական Դատարանի նախագահ Հրայր Թովմասեանի լիազօրութիւնները դադարեցնելու վերաբերեալ Ազգային ժողովի դիմումի քննութիւնը Բարձր դատարանի կողմէ մերժուելէ ետք Թովմասեանի նկատմամբ ճնշումներ կը գործադրուին:

«Եթէ Ազգային անվտանգութեան ծառայութիւնը ինչ-որ հարցեր ունի բորուպցիայի խնդիրների վերաբերեալ, ապա ես որեւէ խնդիր չեմ տեսնում: Այդ մարմինը կարող է իւրաքանչիւր անձի դիմել հարցերով: Գործողութիւնները այս մակարդակում են այս փուլում իրականացուած, եւ ճնշումների մասին խօսելը պարզապէս անիմաստ է», - ըսած է Կարապետեանը:

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան աշխատակիցները անցած շաբաթ այցելած էին Թովմասեանի հայրական տուն: ԱԱԾ գործողութիւնը մեկնարկած էր նոյն օրը, երբ ԱԺ պատգամաւոր Արման Պապաճանեանի դիմումի հիման վրայ Յատուկ Գնահատական Ծառայութիւնը պետական իշխանութիւնը իւրացնելու յօդուածով քրէական գործ յարուցած էր: Պապաճանեանը կը պնդէ, որ Թովմասեանը իւրացուցած է Սահմանադրական Դատարանի նախագահի պաշտօնը՝ յանցաւոր ծրագրեր կիրառելով:

Հրաւիրուած էին Յատուկ Գնահատական Ծառայութիւն՝ բացատրութիւն տալու յարուցուած քրէական վարույթի շրջագիծէն ներս: ՅԲԾ-ն անցեալ Հինգշաբթի օր ՀՀ գրասենեակի եւ Ազգային

Ժողովի մէջ քննչական գործողութիւններ իրականացուցած էր: Յատուկապէս այդ գործողութիւններէն ետք նախկին իշխանութիւններու ներկայացուցիչները սկսան յայտարարել, թէ ՄԴ նախագահի դէմ ճնշումներ կը գործադրուին:

Հանրապետականի խօսնակ Խառուարտ Շարմազանովը Թովմասեանի շուրջ ծաւալող դէպքերը համեմատած է սթալինեան բռնաճնշումներուն հետ:

Վարչապետի մամլոյ քարտուղարը ցինիզմ որակած է ՀՀԿ խօսնակի մեկնաբանութիւնը. - «Իրենք շատ լաւ գիտեն ով է Հրայր Թովմասեանը, իրենց գաղափարակիցն է՝ շատ լաւ տեղեակ այն յանցագործութիւնների շարքի մասին, որ այն ժամանակ տեղի է ունեցել, եւ արել են հենց այդ կուսակցութեան շատ ներկայացուցիչներ: Դրանով է պայմանաւորուած իրենց աջակցութիւնը իրենց, այսպէս ասած, վերջին մոհիկանին»:

Կարապետեանը ընդդիմախօսներուն խորհուրդ տուած է վերջիչել, թէ իրենք ինչ քայլերու գացած են, որպէսզի Հրայր Թովմասեանը ընտրուի ՄԴ նախագահ:

Ըստ վարչապետի մամլոյ խօսնակի, քաղաքական ճնշումներ գործադրուած են նախկին իշխանութիւններու տարիներուն, երբ բազմաթիւ քաղաքական գործիչներ կը բանտարկուէին. - «Յիշեն այն հետապնդումների, այն հարիւրաւոր քաղաքացիներին մասին, որոնք այն իշխանութեան ժամանակ եղել են, եւ Հրայր Թովմասեանը եւ ընկերները դրա մասին որեւէ խօսք չեն ասել եւ փաստօրէն ամբողջութեամբ սատարել են այդ բռնատիրական ռեժիմին»:

Հարկային Մուտքերը Եղած Են Նախատեսուածէն 400 Միլիոն Տոլար Աւելի

Պետական եկամուտներու կոմիտէի նախագահ Դաւիթ Անանեանը հրաւիրած ասուլիսի ժամանակ անդրադարձած է հարկային հաւաքագրումներու ցուցանիշի աճին: Ան յիշեցուցած է, որ կիսամեակի թիւերը ամփոփելու ժամանակ՝ տեղեկացուցած էր, որ արձանագրուած էր 63 միլիարդ դրամ գերակատարման ցուցանիշ: Տարեկան ցուցանիշներով գերակատարումը, որ պէտք է կազմէ 62 միլիարդ դրամ, ապահովուած էր արդէն առաջին կիսամեակին, բայց միաժամանակ մասնագէտները կանխատեսած էին, որ նոյն ընթացքը պիտի չպահպանուի երրորդ ու չորրորդ եռամսեակներուն:



Պետական եկամուտներու կոմիտէի նախագահ Դաւիթ Անանեան

այսինքն՝ ընթացքը շատ աւելի լաւ է, քան կարելի էր պատկերացնել», - ըսած է ան:

Այս տարուան ինն ամսուան հարկային եկամուտներու ճշդուած ծրագրային ցուցանիշը կազմած է 1 թրիլիոն 79 միլիարդ 200 միլիոն դրամ: 2018 թուականի ինն ամսիներու կատարողականը եղած էր 887 միլիարդ 700 միլիոն դրամ: Այսինքն՝ այս տարուան ինն ամսուան նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի համեմատ 191.5 միլիարդ դրամով (400 միլիոն տոլար) աւելի:

«Մենք այն ժամանակ ասացինք, որ երրորդ եռամսեակում կարող է լինել 20-25 միլիարդ դրամի նուազեցում ընդհանուր գերակատարման ցուցանիշում: Սակայն չորրորդ եռամսեակում այդ չափերտաւոր ասած թերակատարման ցուցանիշը կը յաղթահարուի», - ըսած է Անանեանը:

Ան նշած է, որ եթէ առաջին կիսամեակին ունէինք հարկային եկամուտներու 63 միլիարդ դրամ գերակատարում, ապա ինն ամիսներուն այն կազմած է 52.9 միլիարդ դրամ:

«Մենք կանխատեսում էինք, որ թերակատարումը կը լինի 20-25 միլիարդ դրամ երրորդ եռամսեակի համեմատ, բայց մօտաւորապէս 10 միլիարդ դրամ է եղել,

ԼՈՒՐԵՐ

Հայաստան ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքներու Խորհուրդի Անդամ

Հայաստանը ընտրուած է ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքներու Խորհուրդի անդամ՝ 193 երկիրներու քուէարկութեամբ ստանալով 144 ձայն: Այս մասին իր ֆէյսպուքեան էջին գրառում կատարած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:



«Սա մեր երկրի նկատմամբ միջազգային հանրութեան շատ մեծ վստահութեան վկայութիւն է, յատկապէս մարդու իրաւունքները պաշտպանութեան հարցում: Շնորհաւորում եմ բոլորին», - գրած է վարչապետը:

Արտաքին գործոց նախարարութեան լրատուութեան եւ հանրային դիւանագիտութեան վարչութեան հաղորդագրութեան համաձայն՝ 17 հոկտեմբերին Նիւ Եորքի մէջ ՄԱԿ Գլխաւոր վեհաժողովի նիստի ընթացքին կայացած ընտրութիւններու արդիւնքով Հայաստանը ընտրուած է Մարդու Իրաւունքներու Խորհուրդի (ՄԻԽ) անդամ 2020-2022 թուականներու ժամանակահատուածի համար:

Արեւելահայկան երկիրներու տարածաշրջանային խումբին Մարդու Իրաւունքներու Խորհուրդի ընտրութիւններուն յատկացուած երկու թափուր տեղերու համար ներկայացուած էին երեք երկիրներու՝ Հայաստանի, Լեհաստանի եւ Մոլտովայի թեկնածու-

թիւնները: Փակ գաղտնի քուէարկութեան արդիւնքով Հայաստանը, ստանալով 144 ձայն, ընտրուած է առաջին փուլով (Լեհաստան՝ 124, Մոլտովա՝ 103 ձայն): Ընտրուելու համար անհրաժեշտ էր ստանալ անդամ երկիրներու մեծամասնութեան քուէն, այն է՝ 97 ձայն:

«Ձայների գերակշիռ մեծամասնութեամբ ընտրութիւնը վկայում է միջազգային հանրութեան կողմից Հայաստանի Հանրապետութիւնում ժողովրդավարական վերափոխումների եւ մարդու իրաւունքների պաշտպանութեան ու խրախուսման ոլորտում գրանցուած նշանակալի առաջընթացի ճանաչման մասին», - ըստ էության հաղորդագրութեան մէջ:

Նշենք, որ 2003 թուականին Հայաստանը երեք տարիով ընտրուած է ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքներու յանձնաժողովի անդամ: Յանձնաժողովի գործունէութիւնը դադարած է 2006 թուականի մարտին:

«Ryanair»-ը Յայտարարած Է Երեւանէն Եւրոպայի Խոշոր Քաղաքներ 35 Եւրոյով Թռիչքներ

«Հայաստանը այսօր կը դառնայ Ryanair-ի ցանցի 40-րդ երկիրը: Մենք այսօր այստեղ ենք՝ յայտարարելու նոր ուղղութիւններ Երեւանէն՝ Հոտն, Միլան, որոնք կը մեկնարկեն Յունուարէն, Պերլին՝ 2020-ի ամբան: Եւ թերեւս առաջին եւրոպական ուղղութիւնը Գիւմրիէն՝ դէպի Միլան-Խեն, կրկին 2020-ի ամբան», - այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ ըսած է Ryanair իրլանտական պիւտնէթային օդանաւային ընկերութեան ծանուցումներու ղեկավար Տեյվիտ ՕՊրայանը:

Ryanair-ի ղեկավարը նշած է՝ համոզուած են, որ այն 130 հազար ուղեւորները, որոնք կը պատրաստուին տեղափոխել, պիտի նպաստեն նաեւ աշխատատեղերու բացման օդակայանին մէջ:

«Եթէ համեմատենք մեր եւ բարձր արժէք ունեցող ընկերութիւններու սակագիները, ապա այս 135 հազար ուղեւորները պիտի խնայեն 20 միլիոն եւրո», - ըսած է Տեյվիտ ՕՊրայանը, կարեւորելով ընկերութեան կողմէ բնապահպանական չափանիշներու պահպանումը:

Տեյվիտ ՕՊրայանը նշած է, որ Ryanair-ի կայքին մէջ ամենամատչելի գինը կը սկսի մօտ 4 եւրո 99 սենթէն: Ամենաբարձր գինը, օրինակ, Լոնտոնէն-Մալախա ուրբաթ օրուան համար, եթէ նախապէս չէ ամբարձրուած, կ'ըլլայ բարձր, մրցակիցներու համեմատ՝ կէս գին: Տոմսերու միջին գինը 35 եւրո է:

Երեւանէն թռիչքները նախատեսուած են շաբաթական 2 անգամ, յաջողութեան պարագային կ'աւելնան:

Տեյվիտ ՕՊրայանի խօսքերով, Հայաստանն ու իրլանտան շատ ընդհանրութիւններ ունին, երկուքն ալ Եւրոպայի սահմանին են, փոքր երկիր են, բայց ակնյայտ տարբերութիւնը եղանակն է, ինչը պէտք է լաւ ըլլայ զբօսաշրջութեան համար: ՕՊրայանը ներկայացուցած է նաեւ ընկերութիւնը, նշելով, որ այն ամենամեծ օդանաւային ընկերութիւնն է ու ունի ամենամեծ ցանցը Եւրոպայի մէջ: Այս տարի այն պիտի սպասարկէ 150 միլիոն յաճախորդ, յաջորդ տարի այն հասցնելով 200 միլիոնի: Ընկերութիւնը ունի մօտ 500 օդանաւ ու 2000-է աւելի ուղղութիւններ:

«Մեր յաջողութեան գաղտնիքը պարզ է. մենք մարդոց կ'առաջարկենք արդիւնաւէտ ծառայութիւններ՝ մատչելի գիներով», - ըսած է Տեյվիտ ՕՊրայանը:

Քաղաքացիական օդափոխութեան կոմիտէի ղեկավար Տաթևիկ Ռեւազեանը նշած է, որ Հայաստան տեղափոխուելէ ետք իր նպատակը եղած է մեծցնել Հայաստանի օդային կապուածութիւնը, քանի որ այն հսկայական ազդեցութիւն կրնայ ունենալ տնտեսութեան վրայ ու ստեղծել շատ աշխատատեղեր:

«Հպարտ եմ, որ Ryanair-ն աստեղ է», - ըսած է Տաթևիկ Ռեւազեանը:

Վլատիմիր Կարապետեանը Պարզաբանաժ Նախարարներու Աշխատավարձերու Բարձրացման Հարցը

ՀՀ վարչապետի մամուլ խօսնակ Վլատիմիր Կարապետեանը պարզաբանաժ է բարձրաստիճան պաշտօնեաներու աշխատավարձերու բարձրացման թեման:

Շաբթի իրաւապաշտպաններ եւ կուսակցութիւններ կը քննադատեն աշխատավարձերու բարձրացմը գաղտնի եղանակով իրականացուել:

Կարապետեանը ֆէյսպուքի իր էջին գրած է.

«Նախորդ տարի այսպէս կոչուած «պարզեւալճարային աղմուկից» յետոյ վարչապետ Նիկոլ Փաշինեանը շատ յստակ պաշտպանել է բարձրաստիճան պաշտօնեաների պատշաճ վարձատրութիւն ստանալու համակարգը:

Հանրային բուռն քննարկումներից յետոյ վարչապետը որոշում է կայացրել կանոնակարգել պարզեւատրումային համակարգը, որպէսզի բացառուի այն անյարմար իրավիճակը, երբ պետական պաշտօնեաները պարզեւատրում են իրենք իրենց? Իրենց անհատական որոշմամբ եւ «աչքաչափով»:

Սահմանուել է նախարարների, մարզպետների գերատեսչութիւնների ղեկավարների ամսական պարզեւատրումների չափեր, համաձայն որոնց նախարարի ամսական աշխատավարձ պարզեւալճարը կազմի 1.5 միլիոն դրամ, փոխնախարարներինը 1 միլիոն դրամ, մարզպետներինը 900 հազար դրամ,

Փաստաթուղթը շրջանառուել է «գաղտնի» դրոշմագրի ներքո՝ պայմանաւորուած գուտ ներքին ընթացակարգերով:

Նաեւ այս է պատճառը, որ այս առնչութեամբ լրացուցիչ հանրային իրազեկում չի եղել, որովհետեւ վարչապետը մինչ այդ հրապարակային յայտնել է իր դիրքորոշումն այս հարցերի վերաբերեալ եւ հռչակել քաղաքական քուրս, ասելով



ՀՀ վարչապետի մամուլ խօսնակ Վլատիմիր Կարապետեան

նաեւ, որ պէտք չէ նախարարին մեղադրել կենսաթոշակաւուրից բացմապատիկ անգամ աւել աշխատավարձ ստանալու մէջ, քանզի նախարարի աշխատանքի որակից է կախուած թոշակաւուրի յետագայ բարեկեցութեան մակարդակը:

Յիշեցնենք նաեւ, որ վերջին մէկուկէս տարուայ ընթացքում Հայաստանում բացմաթիւ քաղաքացիների աշխատավարձերի, թոշակների, նպաստների բարձրացումներ են տեղի ունեցել, գործընթացը շարունակուում է, եւ 2020 թուականի դրութեամբ Հայաստանի հարիւր հազարաւոր քաղաքացիների աշխատավարձեր բարձրացուած կը լինեն՝ յեղափոխութիւնից յետոյ»:

Գաղտնի յանձնարարականի վերաբերեալ տեղեկութիւնը հրապարակած է «Հետք» պարբերականը, որու հարցմանն ի պատասխան կառավարութեանն որեւէ մանրամասնութիւն չեն փոխանցած նոյն հիմնաւորմամբ՝ որոշումը գաղտնի է:

2019-ի Երկրորդ Եռամսեակին Գործազրկութիւնը Սկսած Է Նուազիւ. Փաշինեան

Այս տարուան երկրորդ եռամսեակին գործազուրկներութիւնը կազմած է 207 հազար 200 մարդ՝ նուազելով 29 հազար 200-ով: Այս մասին «Ֆէյսպուք»-ի իր էջին վրայ գրառում կատարած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Ուրախ եմ արձանագրել, որ 2019 թուականի երկրորդ եռամսեակին մենք գործազրկութեան էական նուազում ունինք:

«Եթէ 2018-ի երկրորդ եռամսեակին գործազուրկներութիւնը կազմած է 236 հազար 400 մարդ, ապա 2019 թուականի երկրորդ եռամսեակին գործազուրկներութիւնը կազմած է 207 հազար 200 մարդ, նուազելով 29 հազար 200 մարդով:

«Ներկայիս մեր երկրի մէջ գործազրկութիւնը կը կազմէ 17,7 տոկոս, ինչ որ կը նշանակէ, թէ նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի հետ համեմատ մեր երկրին մէջ ընդհանուր գործազրկութիւնը նուազած է 2,5 տոկոսով», - գրած է ՀՀ վարչապետը:

Նայիրի Յունանեանը Դիմած Է Ազատ Արձակման Խնդրանքով

«Հոկտեմբեր 27»-ի գործով ցմահ դատապարտուած, «Երեւան Կեդրոն» քրէակատարողական հիմնարկի մէջ իր պատիժը կրող Նայիրի Յունանեանը Սեպտեմբեր 11-ին վաղաժամկէտ ազատ արձակման համար դիմում ներկայացուցած է:

«20 տարին լրանալուց յետոյ դատապարտեալը կարող է դիմում ներկայացնել հիմնարկի վարչակազմին պայմանական վաղաժամկէտ ազատ արձակման համար: Դիմումի հիման վրայ կազմուում են գեկոյցներ եւ 80 օրեայ ժամկէտում քննարկուում է դիմումը եւ պատասխան է տրուում», - այս մասին «Ա1+»-ին յայտնած են ՀՀ ՔԿՀ հանրային կապերու բաժնէն:

Յիշեցնենք, որ Նայիրի Յունանեանը ցմահ ազատազրկման դատապարտուած էր 1999-ի Հոկտեմբեր 27-ն խորհրդարանի մէջ կատարուած ահաբեկչութեան հետեւանքով:

Գարեգին Արքեպիսկոպոս Պէքճեան Պիտի Չմասնակցի Պոլսոյ Պատրիարքի Ընտրութիւններուն

Պոլսոյ Հայոց 85-րդ պատրիարքի թեկնածուներէն մէկը համարուող Գերմանիոյ թեմի նախկին առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Պէքճեանը պիտի չառաջադրուի Դեկտեմբերին կայանալիք պատրիարքական ընտրութիւններուն: Այս մասին Պէքճեան սրբազանը յայտնած է նախօրէին պատրիարքարան ուղարկած նամակով:

«Ներկայ պայմաններուն, երբ խախտուած են շուրջ 10 սրբազան եպիսկոպոսներու իրաւունքները եւ ջնջուած են անոնց թեկնածու ըլլալու հնարաւորութիւնները, ես յարմար կը նկատեմ, ի գորակցութիւն անոնց, նոյնպէս չներկայանալ իբրեւ թեկնածու: Ուղեցոյցի սահմանափակումը պատրիարքարանի ապագայի համար վտանգ կը ներկայացնէ», - իր նամակին մէջ նշած է Գարեգին Պէքճեանը՝ միւս

երկու թեկնածուներուն յորդորելով եւս չառաջադրուելի՝ յանուն հաւասարութեան եւ արդարութեան:

Շուրջ մէկ ամիս առաջ Թուրքիոյ ներքին գործոց նախարարութիւնը նոր պատրիարքի ընտրութեան համար պատրիարքարան ուղարկած էր համապատասխան կանոնադրութիւն, որուն համաձայն պատրիարքի թեկնածու կրնան ըլլալ միայն Պոլսոյ պատրիարքական աթոռին ենթակայ եպիսկոպոսները: Այսպիսով, Գարեգին արքեպիսկոպոս Պէքճեանի չառաջադրուելու որոշմամբ պատրիարքի աթոռի համար երկու թեկնածու պիտի պայքարի՝ ներկայիս պատրիարքական տեղապահ Սահակ եպիսկոպոս Մաշալեանն ու Կրօնական ժողովի ատենապետ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը:

Ո՞ր Կրնայ Հասնիլ Թրամփ

Շարունակուած էջ 1-էն

Սերս մեծամասնութիւն կը կազմեն Թրամփի Հանրապետական կուսակիցները:

Նախագահ Թրամփ բնակարանաբար կը մերժէ իր դէմ եղած մեղադրանքները, զանոնք նկատելով իր նախագահութիւնը կործանելու արշաւին մէկ օղակը՝ շղթայազերծուած քաղաքական հակառակորդներուն եւ պետական համակարգին մէջ գործող որոշ ուժերուն կողմէ:

Ինչ որ ալ ըլլան Թրամփի արդարացումները, այս կացութեան գլխաւոր պատասխանատուն կը մնայ միայն ինք, որ չկարողացաւ յարմարիլ ու գործել նախագահի պաշտօնի պահանջներուն համա-

պատասխան: Այդ պատճառաւ անոր պաշտօնավարման 34 ամիսները նշանաւորուեցան մերքին ու արտաքին սայթաքումներով եւ սկանտալներով:

Հանրային կարծիքի վերջին հարցախոյզներուն համաձայն, Ամերիկացի ժողովուրդի 52 տոկոսը կողմ է Թրամփի պաշտօնէն հեռացումին: Այդ հեռացումը կրնայ չապահովուիլ Գոնկրետի կողմէ պաշտօնագրկումի գործընթացով, սակայն այն պէտք է իրականացայ 2020-ի նախագահական ընտրութիւններով, որպէսզի Ամերիկան ունենայ պաշտօնին համապատասխան կերպարով ու կարողութիւններով օժտուած նախագահ մը՝ անկախ թէ, որ կուսակցութեան կը պատկանի ան:

«ՄԱՍԻՍ»

Թրամփ Թուրքիոյ Դէմ Զօգտագործեց

Շարունակուած էջ 1-էն

ԱՄՆ-ի վարչակազմի բարձրաստիճան պաշտօնեաները Սուրիայէն ամերիկեան զօրքերը դուրս բերելու գործողութիւններու քանի մը ծրագիր ներկայացուցած են Տանըլտ Թրամփին, եւ Թուրքիոյ ներխուժումը զսպելու նպատակով այդ առաջարկները ներառած են նաեւ քաղաքական ու տնտեսական ճնշումներու սպառնալիքներ, բայց Թրամփը նախընտրած է շուտափոյթ դուրս բերել ամերիկեան զօրքերը, որպէսզի անոնք չմնան

երկու բանակներու բախման միջեւ, որոնց երկուքին ալ ԱՄՆ-ը որպէս դաշնակից կը դիտարկէ:

Թրամփը վերջին հաշուով գերադասած է սպառնալիքները Թուրք բարձրաստիճան պաշտօնեաներու նկատմամբ, զգուշացուցած է մետաղի ներմուծման մաքսադրոյթները բարձրացնելու, 100 միլիարտ տոլարի առեւտուրի բանակցութիւնները առկախելու մասին, բայց չէ օգտագործած Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու դիւստանդարտական մահակը, ամփոփած է Newsweek-ը:

Վիթալի Բալասանեանը Ընելիք Հունի

Շարունակուած էջ 1-էն

կառակ ինչ-որ բան անեմ, ես դաւաճանած կը լինեմ էն հարիւր հազարաւոր մարդկանց, ովքեր դուրս են եկել փողոց:

«Նոյնը վերաբերում է արցախեան յաղթանակին: Այն մարդիկ, ովքեր օգտագործում են այդ յաղթանակը ոչ թէ աւելի մեծ պատասխանատուութիւն կրելու, աւելի մեծ նպատակներին ծառայեցնելու, այլ անձնական շահերի համար, նրանք դաւաճանում են մնացած բոլորին, ովքեր մասնակցել են: Եւ այս առումով մենք պէտք է մի հատ շատ կարեւոր բան արձանագրենք, որ պատասխանատուութիւնն է կա-

րեւոր հենց յաղթանակի հանդէպ՝ ե՛ւ Արցախի պատերազմի, ե՛ւ յեղափոխութեան հանդէպ ցանկացածիս պատասխանատուութիւնն է կարեւոր, եւ հենց էդ պատասխանատուութեամբ եւ վարքագծով է որոշուած, թէ մենք ինչպիսի վերաբերմունք ունենք այդպիսի գործընթացների նկատմամբ: Եւ որեւիցէ մէկի արարքները, օրինակ՝ 90-ականների, չի քննարկուած, որեւիցէ մէկին չի ասուած, որ «դուք ինչո՞ւ էք էդպիսի բան արել», հա՛, էդ ընթացքում, առաւել՝ դա դնահատուած է ու բարձր մակարդակի է գնահատուած: Իրենց վարքագիծը այլ ժամանակի եւ տարածութեան մէջ է քննարկուած, եւ դա իրար հետ մեծ հաշուով կապ չունի:

Փայլանը՝ Թուրք Նախարարին. «Ի՞նչ Իրաւական Հիմքով Կ'արգիլէք Տինքի Հիմնադրամի Գիտաժողովը»



Թուրքիոյ ընդդիմադիր քրտամէտ «Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան» (ԺԴԿ-HDP) Տիարպէքլիէն ընտրուած հայ պատգամաւոր Կարօ Փայլանը խորհրդարան տեղափոխած է Հրանդ Տինք հիմնադրամի կազմակերպած գիտաժողովը արգիլելու հարցը:

Փայլանը թեմայի շուրջ գրաւոր հարցապնդում ուղղած է Թուրքիոյ ներքին գործոց նախարար Սուլէյման Սոյլուին՝ պահանջելով պարզաբանել, թէ ինչու արգիլուել է Կեսարիոյ մէջ եւ ապա Պոլսոյ մէջ կազմակերպուած «Կեսարիոյ եւ շրջակայքի ընկերային-մշակութային եւ տնտեսական պատմութիւնը» թեմայով գիտաժողովը:

Հայ պատգամաւորը հետեւեալ հարցերը ուղղած է Սուլէյման Սոյլուին.

1. Հիմնադրամները եւ քաղաքական կուսակցութիւնները, երբ «հաւանքներու եւ ցոյցերու մասին» թիւ 2911 օրէնքին մէջ չեն ներառուել, ապա ո՞ր իրաւական հիմքով արգիլուած է Հրանդ Տինք հիմնադրամի կողմէ կազմակերպուած գիտաժողովը:

2. Այս միջազգային գիտաժողովը, որ պիտի կայանար Թուրքիայէն եւ արտասահմանէն մասնագէտներու մասնակցութեամբ, ի՞նչ փաստարկի հիման վրայ արգիլ-

ուած է նախ Կեսարիոյ, ապա Պոլսոյ մէջ:

3. Ինչպէ՞ս կրնաք բացատրել այդ մասնակիցներուն, որ այդ միջազգային գիտաժողովը, որու կայացման ժամեր մնացած էին, առանց որեւէ փաստարկ ներկայացուելու արգիլուած է:

4. Ինչու՞ ձեր կառավարութիւնը աջակցելու փոխարէն կը փորձէ արգիլել Հրանդ Տինք հիմնադրամի գործունէութիւնը, որով կը զարգանայ երկխօսութեան, խաղաղութեան եւ ապրումակցումի մշակոյթը:

5. Այս արգելման որոշումները կայացուցած էք, որպէսզի չխօսի՞ն Կեսարիոյ եւ ամբողջ շրջակայքին մէջ մինչեւ 100 տարի առաջ գոյութիւն ունեցող բազմամշակութայնութեան, տարածաշրջանին մէջ ապրող հայերու եւ անոնց ճակատագիրներու մասին:

Յիշեցնենք, որ երբ արդէն գիտաժողովի նախապատրաստական աշխատանքները աւարտած էին եւ բոլոր բանախօսները թէ՛ Թուրքիայէն, եւ թէ՛ աշխարհի տարբեր կողմերէն Պոլիս եկած էին, Հոկտեմբեր 17-ին, ժամը 17:08-ին Շիշլիի համալսարանային գիտաժողովը արգիլելու վերաբերեալ ծանուցում ուղարկուած է հիմնադրամ: Ծանուցման մէջ որեւէ փաստարկ չէ նշուած, թէ ինչու գիտաժողովը կ'արգիլուի:

Թուրքերու Ռազմական Գործողութիւնը

Շարունակուած էջ 1-էն

Թուրքիոյ ռազմական գործողութիւնը ցեղասպանութեան փորձորակման, ապա Զենկիւր ըսած է. «Ցեղասպանութիւնը այս երկրի բնակիչի համար ամենածանր խօսքն է, որ կրնայ օգտագործուիլ: Այս ըրածը կը կոչուի պառակտում, անարդարութիւն մի ընէք այս ազգի հանդէպ»:

Կարօ Փայլանի խօսքերը ամենակոչը քննադատած է մեծիսի «Ազգայնական շարժում» կուսակցութեան խմբակցութեան ղեկավար էրքան Աքչայը:

«Անե՛ք այդ խօսքերուն: Թուրքիան իր պայքարը տարածաշրջանի խաղաղութեան, Սուրիոյ հիւսիսը բնակող մարդոց բարօրութեան եւ անվտանգու-

թեան համար կը մղէ», - ըսած է Աքչայը:

Ազգայնական «Լաւ» (Iyi) կուսակցութեան խմբակցութեան ղեկավարը Փայլանի ելոյթի վերաբերեալ ըսած է, որ կը դատապարտէ խորհրդարանական ամպիոնէն նմանատիպ արտայայտութիւններու օգտագործումը:

Ի պատասխան ելոյթի քննադատութիւններուն՝ գլխաւոր ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցութեան (CHP-ԺՀԿ) խմբակցութեան ղեկավար էնկին Ալթայը արձագանգած է. «Փայլանի որոշ խօսքեր չեմ ընդունիր, բայց կան բաներ, որ շատ ճիշդ ըսուած են: Սակայն եթէ սա խորհրդարան է եւ արտայայտուելու վայր է, ապա բոլորը ազատ պիտի արտայայտեն իրենց միտքերը»:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱԿԱՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒԵՐՈՒ

Սորոսը Սերժի եւ Քոչարեանի ժամանակ



ԹԱԹՈՒԼ ՅԱՎՈՒԲԵԱՆ

Հայաստանի գործող իշխանութիւններին, որոնք ընտրուել են ազատ եւ արդար ընտրութիւնների արդիւնքում եւ ստացել ժողովրդի 70 տոկոս քուէն 2018-ի դեկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրութիւններում, նախկին իշխանութիւններին պաշտպանող փոքր խմբերը մեղադրում են նաեւ սորոսական լինելու մէջ:

Վարչապետ Փաշինեանին ու նրա թիմին մեղադրում էին Արցախում հողերը ծախելու, Ստամբուլում կոնվենցիայով (ստորագրել են ՀՀ-ականները. Դաւիթ Յարութիւնեանը հարցը ներկայացրել է վարչապետ Կարէն Կարապետեանի կառավարութեան քննարկմանը, եւ այն ընդունուել է առանց քննարկման) հայ աւանդական ընտանիքը քայքայելու, բանակն ու հայ առաքելական եկեղեցին վարկաբեկելու եւ բազում այլ մեղքերի մէջ:

Սորոսականութեան թեման «Երկիր Մեդիայ»-ի յայտնի հարցազրոյցում շրջանառութեան մէջ դրեց երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը անմիջապէս այն ժամանակ, երբ նրան մեղադրանք առաջադրուեց Մարտի 1-ի գործով: Հեզնական է, որ Սորոսի երեւանի գրասենեակից, այսինքն՝ Բաց հասարակութեան հիմնադրամներից, ժամանակին աւելի քան 150 հազար դոլար դրամաշնորհ ստացել է «Երկիր Մեդիայ»-ն:

Ընդհանրապէս, 1997-ից ի վեր, երբ Հայաստանում հաստատուեց Սորոսի գրասենեակը՝ Բաց հասարակութեան հիմնադրամները, հայկական տասնեակ լրատուամիջոցներ ու հասարակական կազմակերպութիւններ ստացել են աւելի քան 53 միլիոն դոլարի դրամաշնորհ: Այդ լրատուամիջոցներն ու ՀԿ-ները հրաշալի աշխատանք են կատարել: Առաջին դրամաշնորհները Բաց հասարակութեան հիմնադրամները ստուել է 1998-ից, երբ պալատական յեղաշրջման եւ ապա կազմակերպուած ընտրութիւնների արդիւնքում Հայաստանի նախագահի պաշտօնը զբաղեցրեց Ռոբերտ Քոչարեանը:

Քոչարեանի, ապա եւ նոյնքան վիճելի ընտրութիւնների ճանապարհով իշխանութեան եկած Սերժ Սարգսեանի նախագահութեան 20 տարիներին է, որ հայկական լրատուամիջոցներին ու տարբեր կազմակերպութիւններին տրուել է նշուած 53 միլիոն դոլարի մեծագոյն մասը:

Սորոսական լինելու թեման, սակայն, Քոչարեանի ու Սարգսեանի նախագահութեան տարիներին

ակտուալ չէր: Այն շրջանառութեան մէջ դրեցին հէնց Քոչարեանն ու նրան աջակցող փոքր խմբերը: Քոչարեանը խոստովանեց, որ ինքը անգամ ցանկութիւն է ունեցել կասեցնել Սորոսի հիմնադրամի գործունէութիւնը Հայաստանում:

Ի դէպ, Սորոսի գրասենեակները փակուել են Հայաստանի հարեւան մի շարք ոչ ժողովրդավարական երկրներում: Վիկիլիքսի բազմաթիւ փաստաթղթերում խօսուած է այն մասին, որ Քոչարեանը եւ Մարտի 1-ի գործով անցնող Արմէն Գեւորգեանը Հայաստանում ԱՄՆ դեսպանութեան աշխատակիցների հետ փակ գրոյցներում խօսել են ամերիկեան ոչ կառավարական այլ կազմակերպութիւնների գործունէութիւնը Հայաստանում արգելելու անհրաժեշտութեան մասին, քանի որ նրանք միջամտում են երկրի ներքին գործերին, յատկապէս ընտրական գործընթացներում: Դրանցից մէկը ամերիկեան NDI-ն էր:

Ընդհանրապէս, Քոչարեանի ժամանակ պետութեան թշնամի էին որակուած ոչ միայն օտարերկրեայ, այլ նաեւ տեղական կազմակերպութիւնները: Քոչարեանի ուղղակի միջամտութեամբ փակուեց «Ա1 պլյուս» հեռուստաընկերութիւնը՝ ժամանակի ընդդիմադիր եւ իշխանութիւնների կողմից չվերահսկուող ալիքը:

Մարտի 1-ի գործով անցնող Քոչարեանը Հայաստանի գործող իշխանութիւնների որոշ ներկայացուցիչների համարում է «սորոսի սաներ»: Ճիշտ է, ե՛ւ Ազգային ժողովում, ե՛ւ կառավարական շրջանակներում այսօր կան անհատներ, որոնց կազմակերպութիւնները դրամաշնորհներ են ստացել Սորոսի գրասենեակից: Սակայն արդեօք միայն նրանք են ստացել: Եւ ամենակարեւորը՝ այդ ո՞վ է որոշում, թէ որ կառուցն է յանուն հայրենիքի աշխատում եւ որ կառուցը՝ ընդդէմ: Եւ դա պէտք է Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը կամ նրանց աջակցող փոքր խմբերը որոշեն:

Պարոնայ՛ք, դու Ձեր լացը լացէք: Դուք եւ Ձեր ընտանիքի անդամները ներգրաւուած են կոռուպցիոն բազմապիսի գործարքների մէջ:

Սորոսի գրասենեակից դրամաշնորհներ ստացել են Մարտի 1-ի գործով անցնող Քոչարեանի պաշտպաններից Հայկ Ալումեանը, Աժ նախկին նախագահ Արա Բաբլոյեանը, նախկին վլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեանը, ՀՀԿ-ական պատգամաւոր Կարէն Բեքլարեանը, Սորոսի դէմ անհաշտ

պայքար մղող Հայկ Բաբուխանեանը եւ բազմաթիւ այլ քաղաքական, հասարակական գործիչներ:

Կրկնենք, որ մենք անուններ տալիս ենք ոչ թէ մարդկանց ամօթանք տալու, թէ ինչու են Սորոսի գրասենեակից դրամաշնորհ ստացել, այլ ցոյց տալու իրականութիւնը: Իսկ իրականութիւնն այն է, որ Սորոսի դրամաշնորհները տրուած են շատ թափանցիկ կերպով, կոռուպցիայի ռիսկը նուազագոյն է, իսկ ստացուած դրամաշնորհներով օգտակար ծրագրեր են իրականացուել Հայաստանում: Օրինակ, «Հետք» օնլայն հարթակը, որը հետեւողականօրէն բացայայտում է բարձրագոյն իշխանութիւնների կոռուպցիոն գործունէութիւնը, դրամաշնորհներ ստացել է Սորոսի գրասենեակից: Կամ Փաստերի ստուգման օնլայն հարթակը, որը նոյնպէս դրամաշնորհներ է ստանում Սորոսի գրասենեակից, այսօր լաւ հետաքննութիւններ է իրականացնում:

Ընդհանրապէս, կոռուսմպացուած, ընտրութիւններ կեղծող, բռնի ուժով իշխանութիւն պահող կառավարութիւնների (ինչպիսին եղել են Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի կառավարութիւնները) թիւ մէկ թշնամին բաց հասարակութիւնն է: Բաց հասարակութեան պայմաններում են ջրի երես գալիս այդ կառավարութիւնների մոլթ գործերը: Ահա այդ պատճառով է նաեւ, որ Ռոբերտ Քոչարեանին ու Սերժ Սարգսեանին աջակցող փոքր խմբերը կոխ են տալիս կեանքի մաշխամուտին մօտեցած Սորոսի դէմ:

Եւս մէկ ուշագրաւ հանգամանք. Հայաստանին տասնեակ եւ հարիւր միլիոնաւոր դոլարների դրամաշնորհներ տրամադրել են ամերիկեան, եւրոպական, ասիական տարբեր կառավարական եւ ոչ կառավարական կազմակերպութիւններ, ընդ որում, ինչպէս Սորոսի հիմնադրամի դէպքում, տրուել են այն տարիներին, երբ

իշխանութեան էին Քոչարեանն ու Սերժը:

Ինչո՞ւ են նախկին իշխանութիւնները շրջանառում Սորոսի եւ դրամաշնորհների թեման: Երկու հիմնական պատճառ կայ մեր կարծիքով:

Առաջին, Սորոսի եւ դրամաշնորհների թեման շրջանառում են, որպէսզի վարկաբեկեն մաքուր, գտարիւն, Հայաստանում եւ հայկական միջավայրում ձեւաւորուած թաւշեայ, ոչ բռնի յեղափոխութիւնը: Հայ ժողովուրդն է մերժել Սերժին եւ քոչարյանասերժական անցեալը, եւ այդ գործում որեւէ դերակատարութիւն չեն ունեցել ո՛չ Սորոսը եւ ո՛չ էլ դրսի որեւէ ուժ: Եթէ, իրաւամբ, Քոչարեանը, Սերժը եւ նրանց աջակցող փոքր խմբերը համոզուած են, որ դրսի ուժերն են տապալել իրենց, ապա շարունակում են չհասկանալ, թէ ինչ է կատարուել Հայաստանում 2018-ի Ապրիլին:

Երկրորդ, Սորոսի թեման շրջանառելով՝ նախկինները փորձում են գրաւել ռուսների ուշադրութիւնը: Ռուսաստանում Սորոսը եւ նրա հիմնադրամը անցանկալի են, իսկ մեր հայրենակիցներին թւում է, թէ հակասորոսկան աղմուկով Պուտինը պէտք է գայ եւ օգնի իրենց:

Ո՛չ Քոչարեանը, ո՛չ Սերժը Պուտինի ընկերը չեն եւ ոչ էլ՝ բարեկամը: Ռուսաստանը ընդ շահ, եւ որքան էլ Քոչարեանն ու շրջապատը փորձի իրենով կապել հայ-ռուսական յարաբերութիւնները, դա չի ստացուելու: Դա չի ստացուելու առնուազն այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանի հասարակութիւնը աջակցում է Փաշինեանին եւ նրա իշխանութեանը: Այն պահին, երբ այդ աջակցութիւնը նուազի կամ լինի շատ փոքր, գուցէ Պուտինը օգտագործի Քոչարեանին կամ այլ ուժի: Բայց ոչ հիմա:

Հիմա հանգիստ նստէք տեղերում:

«Սիվիլնեթ»





THE WESTERN DIOCESE OF THE ARMENIAN CHURCH
 OF NORTH AMERICA

"Zvartnots" Cultural Committee
 Under the auspices of His Eminence Archbishop Hovhann Derderian, Primate

**Invites you to
 A CONCERT**

**Soprano Isabel Bayrakdarian & Friends: A
 Musical Celebration of Gomidas @150**

Dedicated to the 10th Anniversary of St. Leon Armenian Cathedral

*Featuring works by Armenian composer, ethnomusicologist, researcher,
 and conductor Gomidas Vartabed*

ON SUNDAY, NOVEMBER 10, 2019 AT 6 PM

AT ST. LEON ARMENIAN CATHEDRAL
 3325 N. GLENOAKS BLVD., BURBANK, CA 91504



Featuring Grammy-nominated,
world-renowned soprano

ISABEL BAYRAKDARIAN with
guest musicians from UC Santa Barbara,
Los Angeles, and Fresno, with Anna Hamre
conducting the Fresno Coro Vox Aeterna

TICKETS: \$35, \$50, \$100
 For more information and reservations kindly call
 Diocesan office at (818) 558-7474
 Lena Simonian at (818) 383-1322
 Alice Skenderian at (818) 606-6606

WhatsApp-ի Հարկը Այրեց Լիբանանը. Ալեքսան Բեռնարեան

Մի քանի օր է, որ ինչ Լիբանանում տեղի են ունենում քաղաքացիական բախումներ, որոնք հիմնականում պայմանավորված են երկրի ծանր տնտեսական իրավիճակի հետ: Երկրի լրատվամիջոցները յայտնում են, որ անկարգությունները հետեւանքով երկու մարդ է զոհուել: 24News-ը լիբանանի ներքին իրավիճակի, տեղի հայ համայնքի անվտանգության մասին գրուցեց Սոցիալ Հնչակեան կուսակցության կենտրոնական վարչության քարտուղար, լիբանանաբնակ Ալեքսան Բեռնարեան ի հետ:



«Պարոն Բեռնարեան, ինչ՞ն է պատճառը, որ Լիբանանում սկսուեցին զանգուստային անկարգութիւններ:

«Իրականում, այս ամէնը հետեւանք է երկար տարիների կուտակուած խնդիրների: Լիբանանի կառավարութիւնը 110 մլրդ դոլարից աւել պարտք ունի, երկրի բիւջէն երկար տարիներ չի հաւասարակշռուած, որի հետեւանքով երկիրը տնտեսական ճգնաժամի մէջ է: Ճգնաժամից դուրս գալու համար կառավարութիւնը 2020 թ-ի պիւտճէում տուրքեր եւ հարկեր աւելացրեց: Եւ ամենահետաքրքիրը՝ WhatsApp-ի ամէն առաջին

կազմակերպում են այս ցոյցերը: Սա է պատճառը, որ հաւանաբար տեղ-տեղ բախումներ են լինում իրաւապահների հետ: Սակայն, եթէ նայենք Լիբանանի ընդհանուր քաղաքական պատկերին, կարելի է ասել, որ քողարկուած ձեռով՝ առանց բացայայտելու, այս շարժմանն աջակցում են «Լիբանանեան Ուժեր», Լիբանանի սոցիալիստական, Լիբանանի սոցիալիստական յառաջադիմական կուսակցութիւններն ու իրենց դաշնակիցները: Սակայն, արդար լինելու համար պէտք է ասել, որ սա ինքնաբեր



հաղորդագրութեան վրայ 20 սենթ հարկ ուզեց սահմանել: Օրէնքով, կառավարութիւնը նման նախաձեռնութեան իրաւունք չունի, սակայն այս 20 սենթը կայծ դարձաւ, որ այս ցոյցերու ալիքը սկսուի: Իրականում, սա դրդապատճառ էր, ժամանակի ընթացքում բողոքի ցոյցերը լայնածաւալ դարձան, որովհետեւ կայ անվտանգութիւն Լիբանանի քաղաքացիների եւ պետութեան միջեւ: Այս ամէնի հետեւանքով էլ երեք օր առաջ սկսեցին լայնածաւալ ցոյցեր, որի ընթացքում տեղի ունեցան բախումներ, ունեցանք զոհ: Ցոյցերն ամբողջ Լիբանանի տարածքով են: Հիմնականում կենտրոնացուած են Պէյրուտում եւ մայրաքաղաքի կենտրոնական հատուածներում, սակայն երկիրն իրար կապող բոլոր մայրուղիներում անգամ հեռաւոր գիւղերում բողոքի ակցիաներ են ընթանում: Եթէ այսպէս ընդհանուր գումարային հաշիւ անենք, կարող ենք ասել իմ անձնական կարծիքով, որ մէկ օրուայ մէջ շուրջ կէս միլիոն մարդ է մասնակցել:

«Իսկ ո՞վ է ղեկավարում այս շարժումը:

«Շարժումը մեծամասամբ ինքնաբերու է: Կուսակցութիւնները կամ քաղաքական ուժերը չեն, որ

Վերջ Շահածարաւ Վերնախաւին

Լիբանանցիք աննախընթաց պոթիւնով մը, միահամուռ կերպով, ի վերջոյ աղաղակեցին. «վերջ փտածութեան, կաշառակերութեան, հատուածամոլութեան եւ սանձարձակ ամենաթողութեան:

Ընկերային-տնտեսական հետզհետէ կուտակուող դժգոհութիւնները, ծանրացող տուրքերն ու պետական եկամուտներուն բացաշատ շարաշահումները, ճրիակերներու մեծաքանակ թիւն ու անոնց լիտիավարի պահուածքը, տարիներով իշխանական աթոռներուն փակած հացկատակներուն անտարբերութիւնը երկրին նկատմամբ, ախտավարակ փտածութիւնն ու անպատժելիութեան մթնոլորտը, երկրին բարիքները համաձայնաբար կիսած աւանդական դէմքերուն յամառութիւնը, համատարած գործազրկութիւնը այնպիսի հեղձուցիչ կացութիւն մը ստեղծեցին, որ ինքնաբերաբար միասնականացուց Լիբանանի օրըստօրէ թշուառացող ժողովուրդը, կտոր մը չացի եւ աշխատանքի կարօտ զանգուածները, ընկերային անարդարութեան լիկուած քաղաքացիները:

Աննախադէպ օրեր կ'ապրի երկիրը: Իր ծննդեան իսկ օրէն կրօնա-դաւանական ընդգծուած բաժանումներով բնորոշ Լիբանան, այս հանգրուանին, անհաւատալիօրէն դարձած է միակրօն, մէկ ժողովուրդ, ապաքաղաքական եւ ապակուսակցական: Ան իր բոլոր շերտերով համախմբուած է գերագոյն արժէքի մը շուրջ, որ հայրենիքն է: Թէպէտ նման դրսեւորում պէտք էր ըլլար շատ առաջ եւ ազգային գիտակցութիւնը հա-

մախմբէր մէկ դրօշի եւ մէկ բանակի շուրջ, սակայն աւանդական եւ կարծրացած կառուցներ կը խափանէին նման երեւոյթ, անոր մէջ իրենց շահածարաւ ախորժակներուն ուղղուած սպառնալիք նշմարելով:

«Գիւմրին մեր ընտանիքի համար կարեւոր նշանակութիւն ունի: Ուրախութեամբ կու գանք Գիւմ-

րի, եւ այս այցը առաջին անգամ չէ», - նշած է Նիքոլա Ազնաւուրը:

Շառլ Ազնաւուր իր բարեգործական գործունէութիւնը Հայաստանի մէջ սկսաւ 1988-ի աւերիչ երկրաշարժէն ետք: Յաջորդող 30 տարիներու ընթացքին անոր ներդրած մարդասիրական ջանքերը ուղղուած են երկրի մէջ իրականացուող բազմաթիւ բարեգործական ծրագիրներու:


ՇՆՈՐԻԱՆՈՒԷՍ

Նուիրում

ԲԺ. ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ

ՆՈՐԱՏԻՊ ՀԱՏՈՐԻՆ

Հովանաւորութեամբ՝
Նոր Սերունդ,
Համազգային և Թէքէեան
Մշակութային Միութիւններու
Ինչպէս նաեւ
Ամերիկահայ
Բժշկական Միութեան



— **ԳԵՂԱՐՈՒԷՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ** —
Կիրակի, 17 Նոյեմբեր, 2019, կ. ե. ժամը 3-ին,
Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցույ
«Գուլյումճեան» սրահ, 1510 East Mountain, Glendale
Մուտքը ազատ Հիւրասիրութիւն

Պանծալի Հարիւրամեակ (1920-2020) Երեւանի Պետական Համալսարանը 1921 Յունուար 23

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ԲԶՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա.
ԲԶՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ոսկեդարեան Ուղիով

Հարիւր տարի առաջ Երեւանի Պետական Համալսարանի բացման մեծագոյն բարիքը այն եղաւ որ մինչեւ Խորհրդային Կարգերու հաստատուիլը հայ ուսանողութիւնը ստիպուած էր Ռուսաստան, Գերմանիա, եւ Արեւմտեան Եւրոպա մեկնիլ համալսարանական ուսմանց հետեւելու համար: Հարիւրամեակ մը առաջ առիթը կը ներկայանար որ անոնք Հայրենիքի մէջ ստանային իրենց բարձրագոյն եւ մասնագիտական ուսումը մայրենի լեզուով ու հաստատէին հայկական վաւերական եւ ակադեմիական դրոշմը մը սերունդներու յաջորդականութեամբ, թէ՛ հայրենիքի եւ թէ՛ արտասահմանի հայութեան համար, ի պարծանս հայ մտաւորական եւ մասնագիտական գիտութեանց: Ինչ որ Ոսկեդարուն ստեղծեցին մեր նախնիք, նման դաժան պայմաններու տակ Արշակունեաց թագաւորութեան 428 թուի անկման որպէս պատասխան, հայորդիք մեր շատ մօտաւոր անցեալին 1921 թուին, նորաստեղծ Հանրապետութեան անկման օրերուն ռազմապայտերը հանդիսացան Համալսարանի բացման եւ յաջորդող տասնամեակներու հայ մատենագրութեան եւ մասնագիտական ճիւղերու կատարեալ վերագարթօնքին:

Հիմնադրութիւնը

Երբ 1920 Նոյեմբեր 29-ին Հայաստան մաս կազմեց Խորհրդային Ռուսաստանի իշխանութեան որպէս Հայաստանի Բ Հանրապետութիւն, ամիս մը ետք, Դեկտեմբերին հիմը դրուեցաւ Երեւանի Պետական Համալսարանին որ դարձաւ Հայաստանի բարձրագոյն ուսման հաստատութիւնը: Իսկ 1921 թուի Յունուար 23-ին կատարուեցաւ Համալսարանին պաշտօնական բացումը՝ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ձեմարանի երեւելի հայագէտ շրջանաւարտներու հաւաքական աջակցութեամբ՝ գլխաւորութեամբ Համալսարանի առաջին տնօրէն Յակոբ Մանանդեանի:

Այդ փաղանգը կազմեցին Մանուկ Աբեղեան, Ստեփան Մալխասեան, Գարեգին Եպս. Յովսէփեան, Հրաչեայ Աճառեան, Առաքել Բաբայանեան (Լեո), Ա. Տէրտէրեան, Պ. Քալանթարեան եւ Մ. Թումանեան, հարազատ յաջորդները Սահակ-Մեսրոպեան առաջին դպրոցի Սուրբ Թարգմանիչներուն, 1925 թուին պետութեան կողմէ արժանացան փրոֆեսորի կոչման: Յիշեալ երախտաւոր մտաւորականները իրենց մասնագիտական ուսմանց հետեւած էին Եւրոպական յայտնի համալսարաններէն ներս եւ այժմ պատրաստ էին Հայաստանի Պետական Համալսարանը ընծայելու մեր ազգին:

Պատմագէտ Փրոֆ. Յակոբ Մանանդեան

Երեւանի Պետական Համալսարանի առաջին տնօրէնն էր Ակադեմիկոս Յակոբ Մանանդեան որ իր նախկին տարիներու բեղմնաւոր պատրաստութեան եւ հեղինակութեան տարիներէն ետք, 1920 թուին Երեւան կը հաստատուէր եւ

Խորհրդային Հայաստանի պետութեան յաջորդ տարուան Յունուար 7-ի հրամանագրով Երեւանի Պետական Համալսարանի Տնօրէն կը նշանակուէր, մնայուն կերպով վարելով հայ ժողովուրդի պատմութեան կաճառի վարիչի եւ դասախօսի, ինչպէս նաեւ արեւելագիտութեան եւ պատմագրութեան բաժնի պաշտօնները:

Սկիզբէն Յ. Մանանդեան Ամենայն Հայոց Տ.Տ. Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոսի կողմէ հայրենիք եւ Ս. Էջմիածին կը հրաւիրուէր որպէս դասախօս Գէորգեան ձեմարանին 1900-1905 թուականներուն իր տարեկից երախտաւորներուն Հրաչեայ Աճառեանի, Մանուկ Աբեղեանի եւ Ստեփան Մալխասեանի հետ միասին: Ան կը վարէր նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Արարատ» ամսագրի փոխ խմբագրի պաշտօնը՝ խմբագրի Գարեգին Վրդ. Յովսէփեանի կողքին, յետագային Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Աճառեանի հետ Մանանդեան հրատարակած են «Հայոց Նոր Վկաներ» գիրքը Մայր Աթոռի ձեռագիր մատենաներու ընդմէջէն, լման 15 տարի մեծ վաստակ ձգելով Մայր Աթոռէն ներս, աւարտելով ու հրատարակելով «Մեկնութիւն Ստորոգութեանց Արխիտոտէլի» աշխատութիւնը: Մանանդեան Տասը տարի հեռացած է Հայաստանէն եւ զբաղած որպէս հաւատարմատար փաստաբան:



Փրոֆ. Յակոբ Մանանդեան

Հայրենիք եղած միջոցին ու վերադարձին ետք Համալսարանի տնօրէնը հեղինակած է շարք մը բարձրագոյն մակարդակի հայագիտական եւ աղբւրագիտական գիրքեր՝ «Յունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները», «Կշիռները եւ չափերը հնագոյն հայ աղբւրներում», «Ֆէոտալիզմը հին Հայաստանում», եւ բոլորին պսակը եղող «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» չորս հատորները, միջնադարեան Հայաստանի այլապէս անծանօթ նիւթերու շարքին որոնք եւս կը կազմեն փունջ մը անկրկնելի ուսումնասիրութիւններ պատմագէտ Յակոբ Մանանդեանի հեղինակութեամբ:

Համալսարանի Ուսման Առարկաները եւ Ուսանողութիւնը

Երեւանի Պետական Համալսարանի հաստատման առաջին տարին ճարտարագիտական, մանկավարժական եւ շինարարական բաժինները սկզբնական առարկաները եղան: Հետզհետէ աւելցան պատ-



մագիտական, գիւղատնտեսական, եւ 1922 թուի մարտ ամսուն՝ բժշկագիտութեան ճիւղը աւելցաւ: Նոյն տարին բացուեցան Համալսարանի տպարանը, գիտական աշխատանոցները եւ գրականութեան ու արուեստի գրադարաններն ու առաջին հրատարակութիւնները սկսան լոյս տեսնել:

Ուսանողներու թիւը զգալիօրէն կ'աւելնար 255-էն 1160-ի, եւ 1925 թուականին թիւը հասած էր 1300-ի: Առաջին շրջանաւարտները հասան տարի մը ետք՝ թիւով 37 աւարտականներ: Առաջին հնգամեակին ուսանողութեան թիւը արդէն 3500-ի կը հասնէր, երբ 1927-ին Պետական Համալսարանը դոկտորական աստիճանի թեկնածուներու պատրաստութեան կաճառը կը հաստատուէր: Աւելի կանուխ, 1923-ին, Երեւանի Պետական Երաժշտանոցին բացումը կը կատարուէր որ իսկոյն Կոմիտաս վարդապետի ան-

ուամբ կոչուեցաւ: Համալսարանի սկիզբի շրջանի աւարտականներէն աւելի քան 1500 մասնագէտներ, որոնց կարգին հասան 435 մանկավարժ, 296 բժիշկ, 130 ճարտարագէտ, 324 գիւղատնտես, 93 անասնաբույժ, 252 տնտեսագէտ եւ 11 արուեստագէտ շրջանաւարտներ: Անոնց կողքին առաջին հնգամեակին Պետական Համալսարանը հազարաւոր դասախօսներ եւ ուսուցիչներ ընծայած է հայրենիքին, ինչպէս նաեւ տարբեր մասնագէտներ՝ քիմիագէտ, թուաբանագէտ, իրաւաբան եւ աշխարհագրագէտներ:

Սկզբնական Տարիները

Համալսարանը իսկոյն դարձաւ նաեւ գիտական հետազոտութիւններու կեդրոն, ստեղծելով Պետական Ակադեմիան, ուսումնասիր-

Շար.ը էջ 19



Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

Ծառ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:

Նախքան Ձեր ծրագիրներուն ու առաւելութիւններուն համար Ձեզի կառաչարկով

- 1- Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
- 2- Ունիք անախտաբան ու յուղարկարարութեան ծառայութիւններ յարմար գիւղերով

Մանրամասնութեան համար դիմել՝
ISABEL CRISTINA KEMANIAN
 Pre-Planning Advisor

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016
 (818) 284-8754
 Email: isabel.kemania@sci-us.com



Յուշերու Շարքէն Նոր Մարաշէն... Թալապիա (Տեսարաններ)

ՎԱՐԴԱՆ ԹԱՇՇԵԱՍ
(Շարունակուած նախորդ թիւէն)

Չարաբաստիկ օր մը սակայն, մանկական սրբութենէս քիչ մը շեղելով կը թուի թէ պէտք եղածէն աւելի երկար ու բերանաբաց դիտած ըլլամ, դիմացը, ոտքի վրայ գլուխէն վար թասով ջուր թափող մօրէմերկ մանկամարդուհին:

- Նայէ՛, նայէ՛, նայէ՛, սըւոր նայէ՛, անամօթ, ա՛ռ քեզի ...

Օրս յանկարծական շառաչուն ապտակին հետ, ոչ միայն բերանս գոցուեցաւ, այլև գլուխս ալ ուժգնօրէն ոլորուեցաւ դէպի ուրիշ մերկութիւն՝ բաղնիքին պատը, քիթս դպցնելու չափ, պատիժս բազմապատկող որոտագոյ հրամանով մը, որուն արձագանգը պատէ պատ պտոյտ կատարեց լոգարանի տարածքին:

- Վաղուընէ սկսեալ այլեւս պապայի՛դ հետ կու գաս... խա՛լաս (վերջացաւ)...

Տարիներ ետք, երբ գուարձանքով կը չիշէինք այս դէպքը, մայրս հետեւեալ խոստովանութիւնը կ'ընէր ինծի:

- Առաջին պատիժին ձայն չհանցիր տղա՛ս, բայց երկրորդին շատ լացիր... ինչո՞ւ...:

Մեր տան դիմացը կաթնավաճառ մը ունէինք՝ բարի մարդ մը, որ գործին բերումով ամէն առտու կանուխ, երբ դեռ անոյշ քունի մէջ կ'ըլլային թաղեցիները, խանութին մետաղեայ փեղկը վեր կ'առնէր նեղացուցիչ ճունչիւնով, որքան ալ որ կը փորձէր գոյզ ըլլալ: Յետոյ կաթի խոշոր սաները, ոչ նուազ դղրդիւնով կը գետեղէր գերմանական բանակայինները չիշեցնող եռանիւ «մօթօրսիքլէթ»ին մէջ, փեղկը նորէն կը թրթռացնէր, այս անգամ դէպի վար, խանութը գոցելու համար, որմէ ետք կը սկսէր ընդհանուր լուծութիւնը ականահարող բո՛ւն արարողութեան... «մօթօրսիքլէթ»ը աշխատեցնելու: Այդ անշնորհ մեքենան ալ շուտով աշխատէ՞ր գոնէ: Ութը տասը փորձ կ'ըլլար ֆը՛ս, ֆը՛ս..., կը մարէր, նորէն ֆը՛ս, ֆը՛ս, ֆը՛ս մինչեւ որ մէկէն ի մէկ բռնկէր ու հնազանդէր տիրոջ յամառ ճիգերուն: Հոն ալ չէր վերջանար գործողութիւնը, եւ որպէսզի չմարի, մարդը այս ան-

գամ եօթը-ութը ասեղ պրո՛ւմ, պրո՛ւմ-ներով կը փորձէր տաքցնել մեքենան, բայց նոյն ատեն շարտացոնելով դո՛ւռ, պատուհան, փե՛ղկ՝, ինչ որ գտնուէր ձայնի ալիքներու գօտիին մէջ: Բնականաբար, մարդոց համբերութիւնը տեղի տուաւ լուրջ դժգոհութեան ու բողոքի, որուն վրայ կաթնավաճառը հասկացողական եւ մեղանշողական հարկադրուեցաւ բեռցուած «մօթօրսիքլէթ»ը լուծելայն հրել մինչեւ Սին էլ Ֆիլի մայր ճամբան եւ հոն, թաղին անկիւնը ռմբակոծել խաղողութիւնը, ճի՛շդ մեր դրացիներէն հանդարտաբար Սարգիս աղային ննջարանի պատուհանին առջեւ: Մէկ-երկու, մէկ-երկու, օր մըն ալ Սարգիս աղան՝ ա՛լ ճարահատ, իր գայրոյթը ցմրուր պարպեց տան տանիքէն շարտուած դոյլ մը լեցուն ջուրին հետ, ֆըս-ֆըսը սկսած չսկսած... «էօյլէ օյմազ, պէօյլէ օրո՛ւր», «այդպէս չըլլար, այսպէ՛ս կ'ըլլայ» ի օրէնքը առնելով իր ձեռքերուն մէջ, իբրեւ արմատական լուծում տիրող անհամութեան: Ճիշդ չէր եղածը, բայց անկէ ետք ա՛լ կաթնավաճառը չտեսանք: Խանութը ձգեց եւ զնայ ուրիշ տեղ: Հոն ի՞նչ եղաւ... Աստուած գիտէ:

Տարի մը, ճամբաներուն վերաւոր վիճակը դարմանելու համար Պուրճ Համուտի քաղաքապետութիւնը ասֆալթի փոխարէն նախընտրեց սիմենթով սալալատակել ամէնէն բանուկ փողոցները, ներառեալ մեր տան առջեւինը:

Քանի մը օր արգիւրուեցաւ ճամբու գործածութիւնը, մինչեւ որ լաւ մը չորնայ սիմենթը եւ նոր վէրքեր չբռնանին անոր վրայ... Անցորդներուն համար սակայն մէկ մայթէն դիմացի մայթ անցքը դիւրացնելու համար լաստանման յատուկ կոճղեր գետեղուեցան իբրեւ կամուրջ, ժամանակաւոր կերպով, քաղաքապետարանի ոստիկանի մը սուլիչի հսկողութեան տակ: Երկրորդ օրը, թաղի կատուներէն մին, հլու հնազանդ հետեւելով կանոնին, կամրջակներէն մէկուն վրայէն դանդաղօրէն քալած պահուն, ոստիկանը հեռուէն ազդարարական սաստիկ սուլոց մը արձակեց: Խեղճ կենդանին, շփոթահար, փոխանակ շարունակելու իր ճամբան բնագրական ոստումով մը, ինքզինք

գտաւ թաց սիմենթին վրայ ու փախչելու իր անճարակ փորձին մէջ, խորունկ ձիւնի մէջէն քալողի մը պէս չորս թաթերուն փակած սիմենթը սկսաւ թօթուել ու սրսկել չորս դին, մինչեւ որ հեռանայ վտանգէն... Սուլիչը փրկարար դեր չունեցաւ, ընդհակառակը պատճառ դարձաւ, որ կատուին թաթերը չիտունէ աւելի փոսիկներ կտակեն ճամբուն, Հոլիվուտի առասպելական դերասաններուն ափերուն պէս:

Անտանելի էր Նոր Մարաշի եւ ընդհանրապէս Պէյրութի տաք ամրան եղանակին: Հեղձուցիչ խոնավութիւնը, քրտինքը, Նահր գետի գարշահոտութիւնը անշնչելի կը դարձնէին մթնոլորտը, երբ դեռ չգոյ էին այսօրուան տեսակաւոր օդախտացուցիչները (air-condition): Մարդիկ մեծով, պզտիկով կը բարձրանային լեռ, երեք ամիս տեւողութեամբ, դէպի սիրուած ամառանոցներ, մասնաւորաբար՝ մէկ գիծէն Ալէյ, Պհամտուն, Սոֆար, Շթորա, Թալապիա, Ջահլէ, Այնճար եւ կամ միւս կողմէն՝ Պիքֆայա, Տհուր Շուէյր, Պոլոնիա, Մրուժ, Մթէյն, Պիսքանթա:

Մեր ընտանիքին համար նախընտրելի գիւղը Թալապիան էր, ուր մեծ հայրս եւ մեծ մայրս գործի կը լծուէին ձմեռնային մթերքներու պատրաստութեան, օգտուելով գիւղին ընձեռած դիւրութիւններէն եւ տեղացիներուն ջերմ, սիրալիւր ընդունելութենէն: Խաղողի հիւթով սուճուխ, սամսա, պաստիխ եւ կամ թարխանա, լոլիկի ջուր, թուրշի տեսակներ կը պատրաստուէին յատուկ բժախնդրութեամբ, խիստ համեղ, ընդառաջելու համար Պէյրութէն նախապէս կատարուած ապսպրանքներու երկար շարքին:

«Չարքարին փոստան» (մարդատարը) կը կատարէր ընտանիքներու դէպի գիւղ փոխադրութիւնը, յատուկ ժամադրութեամբ ու ժամանակացոյցով, այնքան որ բռնուած կ'ըլլար մեքենան: Արտագաղթի արարողութեան պէս տան ապրանքները խոհանոցէն մինչեւ ննջարան, տուփերու եւ փաթեթներու մէջ կը բեռցուէին «փոստ»ին տանիքը, ետեւը եւ ներսը, աթոռներուն վրայ ու երգով, ծիծաղով, ուտելով կը բարձրանայինք լեռ, հաճելի օրերու ակնկալութիւններով: Հայրս՝ դերձակ, գործի բերումով Պէյրութ կը մնար եւ մեզի

կը միանար Շաբաթ օրերու յետմիջօրէին, Կիրակի երեկոյեան վերադառնալու պայմանաւ:

Թալապիա...
Չուտ մահմետական գիւղ էր, քրիստոնէայ Շթորային եւ Ջահլէին մէջտեղը: Հայ ըլլալով մէկ կամ երկու ընտանիք կ'երթար հոն, հակառակ անոր, որ գիւղացիները խորունկ յարգանք եւ վստահութիւն կը տածէին մեզի հանդէպ, գնահատելով ամէն ամառ իրենց գիւղը ընտրած ըլլալու մեր որոշումը: Շատ ապահով կը զգայինք իրենց մէջ եւ մեծերու քաջալեր վերաբերումին դիմաց փոքրերս՝ մահմետական-հայ սերտ բարեկամութեամբ կը խաղայինք, արշաւներ կը կազմակերպէինք, որսի կ'երթայինք եւ զարնուած թռչուններն ալ հաւասարապէս կը բաժնուէինք մեր միջեւ:

Մեծ հայրս խանութ մըն ալ կը վարձէր Շթորա-Ջահլէ մայր ճամբուն վրայ, նպարավաճառութեամբ լեցնելով իր ժամանակը, մինչեւ որ հասունային խաղողները: Իր քովը՝ մսագործ Ահմէտն էր, որ կենդանիները կը մորթէր խանութին առջեւ եւ արիւնն ալ կը լուար դէպի ճամբայ, բաց հրակէր ուղղելով գիւղի ճանճերուն եւ իշամեղուններուն: Օր մըն ալ կէս մորթուած կովը իր ոտքերուն ամրացած չուանէն պրծաւ եւ խելագարած վիճակով սկսաւ վազել մայր ճամբուն վրայ, աջ-ձախ, խուճապի մատնելով շարժավարները, մինչեւ որ կորսնցուցած իր արիւնէն ու ժասպառ ծունկի գայ ու վերադառնայ Ահմէտին դանակին:

Թալապիան նշանաւոր էր իր խաղողով, ոչ շատ հեռու Քսարայի քաղցրահամ թուզէ, Այնճարի ակին գուլալ ջուրերէ, Թանայի խիտ անտառներէ, Շթորայի խշշացող բարտիներէ եւ Ջահլէի դրախտային Ուատիյէն... Աւանդական սուճուխի պատրաստութեան համար խաղողը կը կոխկրտուէր երկար անտուկներուն մէջ, ապա մեծ կաթսաներով անոր հիւթը ժամերով կ'եփուէր, մինչեւ որ լաւ մը թանձրանար ու իր մէջ ընկալէր շարանշարան դերձաններու վրայ անցուած դամասկոսեան ընտիր ընկոյզը, քանի մը անգամներ, աւելի ուշ լուացքի պէս կախուելու արեւուն տակ, օրեր շարունակ: Իսկ յոգնութեան ծարաւն ալ կը յագեցուէր

Շար.ը էջ 19

INNOVATIVE
Designs  Manufacturing, Inc.

idmifurnishings.com

Ծիծաղը Առողջութեան Հօգ Գրաւական է

Բոլորս կը ձգտինք երջանկութեան եւ ուրախութեան, բայց մեզ շրջապատող կեանքին մէջ, հակառակի նման, աստիճանաբար կ'աւելնան տագնապայարոյց իրադարձութիւններն ու ճնշումները: Իբրեւ հետեւանք, մենք աւելի ու աւելի կը կտրուինք մեր բնական վիճակէն, որուն կը փոխարինէ արհեստական միջավայրը՝ արհեստական լուսաւորութիւն, արհեստական սնունդ, արհեստական ջարաբերութիւններ: Բայց մեր հոգին կը պահանջէ բոլորովին այլ բան: Եւ ահա մենք կը սկսինք փնտռել ցանկալին: Կը փնտռենք տարածութեան ու ժամանակի մէջ, կը փնտռենք ուրիշներու մէջ, կը փնտռենք մենք մեր մէջ: Եւ պատկերացնէք, որ կը գտնենք... Ձենք կրնար ժխտել, որ իւրաքանչիւրիս կեանքին մէջ ալ կան երջանիկ պահեր: Անոնք կրնան ըլլալ վայրկեաններ, ժամեր, օրեր: Մենք գանոնք կ'ընդունինք իբրեւ պարզեւատրում մեր ջանքերուն դիմաց եւ կը սպասենք, թէ երբ պիտի աւարտին, քանի որ կը հասկնանք՝ այն ամէնը, ինչ ունի սկիզբ, ունի նաեւ վերջ: Բայց որքան պիտի ուզէինք, որ այդ պահերը չաւարտէին:

Իսկ ատիկա հնարաւոր է...

Կը պարզուի՝ մեր յիշողութիւնը կրնայ օգնել մեզի ժամանակի մէջ երջանկութեան զգացողութիւնը աւելի երկարաձգելու:

Իսկ ատոր համար կայ մէկ գործիք, որ նման է մաքուր միջերթի, գերծ է վնասակար ազդեցութիւններէ, նոյնիսկ երեխաները կրնան օգտագործել գայն, չափազանց առողջարար է, անկէ կրնաք օգտուիլ երբ ուզէք եւ ուր ուզէք: Բոլորին համար մատչելի եւ համաշխարհային ըլլալով՝ անիկա նաեւ է շատ անհատական է:

Ծիծաղ. ահա թէ որն է մեզի երջանկութեան պահեր պարզեւող համաշխարհային գործիքը: Անիկա ախտամերժութեան (immunity) այն բնական հատիկն է, որ թաքնուած է մեզմէ իւրաքանչիւրի մէջ: Հոգեբանները կ'առաջարկեն անոր միջոցով երջանկութիւն արարել:

Մենք խեղաթիւրած ենք ծիծաղի նշանակութիւնը, քանի որ անիկա միայն կը կապենք ուրախութեան հետ: Եթէ ուրախանալու ոչինչ կայ, ուրեմն նաեւ ծիծաղիլը անտեղի է: Բայց չէ՞ որ բնութեան մէջ այդպէս չէ:

Ծիծաղը առողջութեան հօգը գրաւական է: Եթէ ժպտիս, ծիծաղիս, անկախ քու տրամադրութենէդ, ուղեղդ կ'արտադրէ էնտորֆիններ, որոնք մարմնին նոյնքան

անհրաժեշտ են, որքան առողջ սնունդը: Անոնք կը կարգաւորեն ցաւային զգացողութիւնները, կը խթանեն ախտամերժութեան համակարգը, կը բարելաւեն սրտամկանի սնուցումը: Այլ խօսքով՝ էնտորֆինները «երջանկութեան հորմոններն» են: Անոնց օգնութեամբ անյաղթահարելի խոչընդոտները կը սկսին ձեզ միանգամայն յաղթահարելի թուիլ: «Ամենագորութեան» այդպիսի վիճակը շատ մօտ է երջանկութեան զգացողութեան:

Ծիծաղը շատ բարենպաստ ազդեցութիւն կ'ունենայ մեր հոգեբանութեան վրայ:

Մեր բոլոր հոգեբանական խնդիրները՝ բարդոյթները, ջղագրգիռ վիճակը, խոր յուզերը սովորաբար գիտակցուած չեն, այսինքն կը գտնուին ենթագիտակցական մակարդակի վրայ:

Անոնք կ'արտացոլան մեր երազներուն մէջ, ստեղծագործութիւններուն մէջ եւ շրջապատի մարդոց նկատմամբ ջղային վերաբերմունքին մէջ:

Ի՞նչ կրնայ ընել սովորական ծիծաղը... Ծիծաղի եթերային ալիքը ամբողջ մարմնին կը ստիպէ շարժիլ եւ տատանիլ:

Մարմնի լարուածութիւնը ծիծաղի ժամանակ կը թուլնայ, եւ հոգիի խորքը ամբարուած խնդիրները ջուրի երես կ'ըլլեն, մտչելի կը դառնան գիտակցական մակարդակի վրայ: Առողջ մարդը կը ծիծաղի ամբողջ մարմնով, ինչպէս փոքրիկները: Իսկ հիմա պատկերացուցէք, թէ ինչպէս կը ծիծաղի վտիտ, վատառողջ մարդը. ան պարզապէս կը քրքջայ քիթի տակ: Ծիծաղի ալիքը աւելի խոր չի հասնիր, քանի որ անոր ողջ մարմինը լարուած է: Այդ լարուածութիւնը տարիներու ընթացքին կը վերածուի իւրօրինակ պատեանի: Իսկ ծիծաղը ի գօրու է կոտրելու այդ պատեանը:

Այն հոգեբաններն ու եոկերը, որոնք մարդոց հետ աշխատելու ժամանակ կ'օգտագործեն ծիծաղը, նկատած են, որ ծիծաղի միջոցով բուժումը ամենարդիւնաւէտն է:

Մենք պէտք է վերականգնենք ծիծաղելու սովորութիւնը:

Հոգիով ուրախ մարդուն ծիծաղը անկեղծ է ու բնական եւ կը փոխանցուի միւսներուն, կը բարձրացնէ նաեւ անոնց տրամադրութիւնը: Հոգիէն բխող անկեղծ ծիծաղը գրաւիչ է ու վարակիչ: Դուք կը դառնաք շրջապատի սիրելի, կ'արժանանաք հիացմունքի: Ծիծաղը կը դառնայ ձեր այցեբարտը, որ բոլորին կ'ազդարարէ՝ «ես երջանիկ եմ, ես անկեղծ եմ, ես կը վայելեմ կեանքը»:

Սխալելու Վախը Կարելի է Յաղթահարել Պարզապէս Վախնալէ Դադրելով

Շատեր ունին սխալած ըլլալու, որեւէ բան իրենց ուզածին պէս չընելու վախ: Ո՞րն է աւելի լաւ՝ գործել եւ սխալի՞լ, թէ՞ ոչինչ ընել: Այս հարցը առիթ կը դառնայ բազմաթիւ բանավէճերու, որուն իւրաքանչիւր մարդ, իրավիճակէն կախուած, ունի իր պատասխանը, կը կատարէ իր ընտրութիւնը:

Ընդհանրապէս սխալելէն երբեմն վախնալը լիովին բնական է: Ատրենալինը կ'օգնէ մեզի ծայրայեղ իրավիճակներու մէջ ճիշդ ընտրութիւն կատարելու: Իսկ երբեք չվախնալը կամ միշտ վախնալը մեր կեանքը կը դարձնեն անհանգիստ եւ մենք չենք կրնար 100% երջանիկ կամ ինքնավստահ զգալ մենք մեզի:

Ի՞նչպէս յաղթահարել այդ վախը Պարզապէս պէտք է դադրիլ վախնալէ: Ծանր է նոյնիսկ պատկերացնելը, թէ վախի պատճառով

որքան բան է կը գրկուինք կեանքի մէջ: Մենք կը շրջանցենք երջանիկ, հարուստ ըլլալու, ընդհանրապէս՝ լիարժէք ապրելու բազմաթիւ հնարաւորութիւններ:

Մեզ պարզապէս կը կաշկանդէ չյաջողելու վախը: Ի վերջոյ՝ որոշում չընդունիլը նոյնպէս որոշում է: Վախնալը նոյնպէս մեր որոշումն է. մենք կ'որոշենք ոչինչ ընել մեր վախի յաղթահարման համար եւ կը շարունակենք ապրիլ գայն կրելով:

Բոլորն ալ սխալներ կը գործեն: Բացառապէս՝ բոլորը: Անգամ անոնք, որոնց մասին կը մտածենք, թէ հաստատ չեն սխալիր: Պարզապէս անոնք կտրած-անցած են ծայրայեղ սխալներու սահմանագիծը, փորձ կուտակած են, եւ այժմ իրենց կը զգան վստահ ու կը հաւատան սեփական ուժերուն: Արժէ, որ բոլորս ալ այդպէս վարուինք. որոշենք եւ փորձենք յաղթահարել սխալելու վախը:

Հոգեբանութիւն-Վերլուծում Մարդուն Արժէքը

Դարերէ ի վեր կրօնքի իրերաշարժող փիլիսոփայութիւններ փորձեցին բարձրացնել մարդուն արժէքը: Քրիստոնէութիւնը իր հիմնադիրը՝ Քրիստոսի խօսքերով եւ գործերով մեծ արժէք տուաւ մարդուն, նոյնիսկ ամենահամեստ կարծուածին: Դժբախտաբար շատ մը շարժումներ չկրցան պահել այդ դաւանանքը: Նոյնիսկ քրիստոնէութեան մէջ, մանաւանդ Արեւմուտքի մէջ, կրօնականներ Աստուծոյ անունով անմեղ մարդիկ դատեցին եւ մահուան դատապարտեցին: Քրիստոնէութեան անկումը այս կէտէն սկսաւ: Ապագային, ֆրանսական լեղափոխութեան, Ռուսական լեղափոխութեան, Ֆաշիզմի, ազգայնականութեան պատրուակներով հազարաւոր անմեղ մարդիկ մահուան դատապարտուեցան:

Վերջին տարիներուն, ընկերութեան մէջ կը հանդիպինք մարդոց, որոնք չեն գիտեր որ դաւանանքին համեմատ իրենց քաղաքական հակառակորդը կը հարուածեն գործածելով ամէն ձեւ, որ շատ հեռու է քրիստոնէական եւ բարոյական որեւէ դաւանանքէ: Այս մարդոց համար, հակառակորդը պիտի հար-

ուածես իր անձնականին դաշելով:

Ո՞ւր կ'երթանք բարեկամներ: Սահման չկա՞ց ձեր ազատութեան: Մինչեւ ո՞ւր պիտի հասցնէք մեր ազնիւ, բարի ժողովուրդը: Ժաման է արթննալու: Ոեւէ անձի հետ եթէ տարակարծութիւն ունիք, լուծեցէք գայն երկխօսութեամբ եւ քննարկումով: Մեր ժողովուրդը հեռու պահեցէք ձեր անձնական հաշիւներէն: Մեզ մի տանիք դէպի միջնադար: Այդ ժամանակի վարուելակերպէն մենք շատոնց հեռացանք:

Մարդը, հայ մարդը մեծ արժէք ունի: Չեղինք այդ փիլիսոփայութիւնէն: Մարդու արժէքի բարձրացումը պիտի ըլլայ մեր գործը եւ ոչ թէ հակառակը: Հակառակը կը պատկանի հակաքրիստոնէական գաղափարախօսութեան, որ հեռու է մեր ազգային դաւանանքէն:

Քրիստոնէութիւնը միայն ամէն կիրակի եկեղեցի երթալ չէ, այլ գայն ապրիլն է: Ապրիլ Մեծ վարդապետին ուսուցանած դաւանանքով: Բարձրանալ մեր միտքով, խօսքով եւ գործով ու մեզի հետ բարձրացնել մեր ընկերը, կուսակիցը, հայրենակիցը:

Լիարժէք Կեանքով Ապրելու Համար Օգնեցէ՛ք Այլ Մարդոց

- Սիրեցէ՛ք ձեր մտերիմները: Ձեր ժամանակը անցուցէք անոր հետ, զոր կը սիրէք եւ դուք ձեզի յաջողակ պիտի զգաք:

- Շատ ժամանակ տրամադրեցէ՛ք ձեր սիրած մասնագիտութեան: Եթէ կը սիրէք ձեր աշխատանքը, աշխատեցէ՛ք որքան կրնաք շատ: Եթէ չէք սիրեր, ընտրեցէ՛ք այլ մասնագիտութիւն: Անիկա շահաւէտ պիտի ըլլայ ե՛ւ ձեր, ե՛ւ ձեր շրջապատին համար: Աշխատանքը կը զբաղցնէ մեր կեանքին մեծ մասը եւ կարելի չէ այդ ժամանակը վերածել տառապանքի:

- Օգնեցէ՛ք այլ մարդոց: Մեր մէջ խորապէս ամրապնդուած է այլասիրութիւնը՝ շրջապատին օգնելու անհրաժեշտութիւնը:

Օգնելով ուրիշներուն՝ դուք

առաջին հերթին կը բարձրացնէք ինքնայարգանքը, երկրորդ՝ կը հանէք ձեր մէջէն հոգեբանական եւ ֆիզիքական լարուածութիւնը: Արդիւնքը. կը բարձրանայ կեանքի հանդէպ բաւարարուածութիւնը, որ աւելի կը մօտեցնէ յաջողութեան:

- Փորձեցէ՛ք ուրախ ըլլալ: Հետեւեցէ՛ք ձեզի, պարզեցէ՛ք, մտածեցէ՛ք ի՞նչը լաւ տրամադրութիւն կու տայ ձեզի, ի՞նչը կ'ուրախացնէ ձեզ եւ ըրէ՛ք գայն:

- Մարզանք ըրէ՛ք: Դեռ այդքան ալ պարզ չէ ինչո՞ւ, բայց իւրաքանչիւր մարզանք հաճոյք կը պատճառէ առողջ մարդուն: Ձայն կ'անուանեն «մկանային ուրախութիւն»: Կայ կարծիք, որ մարզանքի իբրեւ արդիւնք ուղեղին մէջ կ'արտադրուի երջանկաբեր թմրանիւթ:

Որպէսզի Մագերը Առողջ Տեսք Ունենան Լաւ Պիտի Ըլլայ Ուշադրութիւն Դարձնել Հետեւեալ Ուտելիքներուն

Մագերուն որակը եւ ամրութիւնը մեծապէս կախեալ է սննդակարգէն: Մագերուն որակը բարձր պահելու անհրաժեշտ միջոցներն են.

- Կաթնամթերքը. Կաթնամթերքները իրենց մէջ կը պարունակեն մագերուն համար օգտակար գրեթէ բոլոր բաղադրիչ ները:
- Պանանը. Պանանը կը պարունակէ պիտիլին, որ օգտակար է ոչ միայն մագերուն, այլեւ ամբողջ օրկանիքին համար:
- Սոյան. Մագերուն 97 տոկոսը բաղկացած է քերթիինէ: Այդ պատճառով ալ մագերուն աճը կախ-

եալ է սպիտակուցներէն:

Այս պարագային սոյան շատ օգտակար է:

- Արեւածաղիկը. Եթէ ձեր մագերը կը կտրուին, հաւանաբար գինքի պակաս ունին: Այդ պակասը կրնաք լրացնել արեւածաղիկի հատիկներով:

- Քիուին. Քիուին կենսասնութեան պարունակութեամբ առաջնորդ կը համարուի: Մէկ քիուին բաւական է մարմնի մէկ օրուան համար անհրաժեշտ կենսասնութեան բաւարարելու համար:

- Ձկնեղէնը. Գաղտնիք չէ, որ

նաեւ մագերու ամրութեան եւ որակի բարձրացման:

Սուրճը

Անդադար ուժ ստեղծող եւ յառաջացնող՝ համաշխարհային այդ մուժ հեղուկը, որ մեծապէս կը նպաստէ նաեւ աշխարհի տնտեսութեան եւ առեւտուրին, ինչպէս նաեւ ընկերային շրջանակներու ծառային. սուրճը կը նկատուի աշխարհի առաջին եւ սիրուած ըմպելիքը:



Աւելի քան երկու պիլլիոն գաւաթ սուրճ կը խմուի օրական՝ աշխարհի չորս ծագերուն եւ յատկապէս առաւօտեան գործի ընթացքը անկարելի կը թուի շատերուն՝ առանց սուրճի: Կ'ըսուի թէ համաշխարհային այդ մեծ պահանջը ինչպիսիք է, որ մը կը նայ սուրճ գոյութիւն չ'ունենալ...

Ուրկէ կու գայ սուրճի ծառաւը եւ ինչպէս այս ըմպելիքը տիրած է աշխարհին: Անոր »արօմա«ն, մտադրօծն ազդեցութիւնը, թէ ընկերային շրջաբերութիւնը:

Սուրճի պատմութիւնը կ'ըսուի Եթովպիայի կանաչ եւ հիւթալի լեռներէն, որ արաբական սուրճի նուրբ ծաղիկներուն ծննդավայրն է: Ափրիկէյի Օրօմիացիները առաջինը եղած են գիտակցելու եւ կարելորութիւն տալու սուրճի հատիկներու ազդեցութեան եւ զայն դարցուցած են իրենց խոհանոցի կենսական ըմպելիքը:

Ափրիկէյէն դուրս, միջին դարերուն, եմէնի ժողովուրդը սկսած է սուրճի օգտագործումը, որպէս խորհրդաւոր արարողութեան պահ: Անկէ ետք սուրճը տարածուած է Պարսկաստան, թուրքիայ, հիւս.

Ափրիկէ, Ասիա եւ Հարաւ. Ամերիկայ: 2016 -էն սկսեալ Պրագիլը դարձած է առաջնակարգ սուրճ արտադրող երկիրը:

Ժամանակին յարատեւ Սուրճ խմողները հաւատացած են անոր դարմանող յատկութիւններուն եւ այլ ազդեցութիւններուն՝ մարմնին, մտքին, սրտին, մարսողութեան եւ այլ հոգեկան պահանջներուն: Յարգելի է նաեւ այդ իրականութիւնը, որ շատեր երբեք սուրճ չեն կրնար խմել:

Այս դարուս, ինչպէս բոլորիս յայտնի է, սրճելու վայրերը շատ են: Տուներու մէջ եւ յատկապէս ընկերային եւ աշխատանքային հանդիպումներու ընթացքին, սուրճը կը մնայ նախնար ըմպելիքը:

Այսօր, Պրագիլը, Վիչթնամը եւ Գոյոմպիան սուրճ արտադրող երեք մեծ երկիրները կը հանդիսանան: Իսկ Միացեալ Նահանգները, Գերմանիան եւ Ֆրանսան ամենամեծ ներածողները: (Importers)

Մաղթենք որ երկրագունդի վրայ միշտ գոյութիւն կ'ունենայ սուրճը եւ կ'ըսենք հազար անուշ՝ խմողաց:

Լ.Մ.

Ընկոյգի Ամէնօրեայ Օգտագործումը Կ'երկնցնէ Կեանքը

Ընկոյգի ամէնօրեայ օգտագործումը կ'երկնցնէ մարդու կեանքը: Պարզուած է, որ ընկոյգի որոշ քանակի օգտագործումը (ամէնօրեայ) մօտաւորապէս 19%-ով կը նուազեցնէ տարբեր հիւանդութիւններու հետ կապուած մահացութեան վտանգը:

Ասիական աստատուած է անդաւանունի, առողջ ապրելակերպի գործօններու, տարբեր սեռի եւ տարիքի մարդոց առողջական խնդիրներուն առնչուող շարք մը ուսումնասիրութիւններու հիման վրայ:

Գիտնականներու կարծիքով՝ ընկոյգի հանդէպ կախուածութիւնը

կը համարուի օգտակար սովորոյթ: Ամէն օր ընկոյգ օգտագործող մարդիկ ունին աւելի սլացիկ կազմուածք, շատ ժամանակ կը տրամադրեն մարմնամարզանքին, քիչ կը ծխեն, կ'օգտագործեն բաւական շատ միրգ եւ բանջարեղէն:

Օգտակար կը համարուի օրական 30 կրամ ընկոյգի օգտագործումը:

Ենթաստամոքսային զեղձի քաղցկեղով առաւել քիչ կը հիւանդանան այն կիները, որոնք պարբերաբար կ'օգտագործեն ընկոյգ, նուշ, պիստակ եւ հնդկընկոյգ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

WhatsApp-ի Հարկը Այրեց Լիբանանը

Շարունակուած էջ 7-էն

րական շէնքերի մօտ: Կրկնուած էմ, հիմնական խնդիրը տնտեսական հարցն է, նոր հարկեր աւելացնելու գաղափարը: Եթէ դրանք անցնէին՝ մեծ վնաս պէտք է կրէր աշխատաւոր եւ միջին դասակարգը: Բացի այդ, վերջին Լիբանանի քաղաքացիական պատերազմից անցել է 30 տարի, բայց կան տարրական չլուծուած հարցեր: Բնակչութիւնը էլեկտրականութիւն եւ ջրամատակարարում չունի, աղբահանութեան վիճակը շատ ծանր է: Աղբակոյտեր կան, որ համուած են չորս հարկանի շէնքի բարձրութեանը: Հարցը շատ բազմազան է, եւ վերջիվերջոյ պայթեց: Ժողովուրդի պահանջը սոցիալական է, իրենց չի հե-

տաքըքրում, թէ Լիբանանի արտաքին քաղաքականութիւնն ինչպիսին է, իրենց հետաքրքրում է իրենց օրապահիկն ու ահազնացող արտագաղթը: Այսօր երրորդ օրն է, ինչ Լիբանանը անդամալուծ վիճակում է, գլխաւոր մայրուղիները փակ են: Կառավարութիւնը, նախագահն ու խորհրդարանը ոչինչ չեն խօսում: Երեկ միայն գործող վարչապետը կարճ խօսեց՝ խնդրելով ժողովրդից համբերութիւն: Ինքն իր կառավարութեանը 72 ժամ տուեց՝ հարցը լուծելու համար: Կառավարութիւն կազմող ուժերն իրենք իրենց մէջ հարցեր ունեն: Եթէ խնդիրը չլուծուի, ենթադրում էմ, որ վարչապետը հրաժարական կտայ, իսկ դրանից յետոյ ինչ կը լինի՝ ոչ ոք չգիտի:

Վե'րջ Շահածարաւ Վերնախաւին

Շարունակուած էջ 7-էն

սպիները, կար յուսադրուած ժողովուրդ, կար լաւատեսութիւն, կար դրական տեղաշարժ: Սակայն՝ աւելի ուշ, ներքաղաքական ու հատուածական գծուած սակարկութիւնները, տնտեսական իւզոտ լծակներու շուրջ տուրեւաւոր եւ իրերայաջորդ կառավարութիւններուն օդին մէջ առկա շողջողուն խոստումները հետզհետէ պատրանաթափ դարձուցին քաղաքացիները? անիրաւաբար եւ անխտրաբար:

Ինչպէ՞ս չընդվզէր ժողովուրդը, երբ 30 տարի է ի վեր չէ լուծուած էլեկտրականութեան հարցը, աղբահանութիւնը դարձաւ անլուծ թնձուկ՝ ժողովուրդի առողջութեան հաշուոյն, վարձակալութեան կամայական օրէնքները, թանկացումները անկողար կը սլանան, կը թաթռալները բարձր, բժշկութիւնը հարուստներուն միայն մատչելի, գործազուրկներու բանակը կը ստուարանայ, իսկ արտագաղթը պատերազմէն ետք աւելի դարձաւ համատարած՝ քան պատերազմի թէժ օրերուն: Տուրք ու հարկ ա՞յնքան ճնշեցին, որ պայթումը եղաւ անխուսափելի:

Անխուսափելիէն ահա ծնաւ ոմանց արտայայտութեամբ «յեղափոխութիւնը»: Երկիրը թեւակոխեց նոր տեսակի տազնապի մը հանգրուանը, երբ մերժելի են կիսատ-պոստ առաջարկները, յամեցած բարեփոխումները, տնտեսութեան հապճեպ ապաքինումը: Ժողովուրդը իրաւացիօրէն կը պնդէ արմատական փոփոխութեանց վրայ, հաշիւ կը պահանջէ բոլորէն, թիրախաւորած է ամբողջ տիրող համակարգը, շահածարաւ վերնախաւը:

Պատմական օրեր կ'ապրի Լիբանան: Ակնբախ է ցայտուն իրականութիւն մը. ցարդ կրօնապետներ, պետական ու քաղաքական այրեր, գործիչներ բազմիցս փորձած էին միասնականացնել ժողովուրդը, բայց անյաջողութեան մատնուած, որովհետեւ անոնց ետին

կը տեսնուէին տուեալ պահուն եւ յարանուանութեան շահագրգռուածութիւնը, թաքուն նպատակը: Այս անգամ սակայն, դասակարգային պայքարն ու թշուառութիւնը, իրողապէս մէկ բուռնցքի վերածեց ճնշեալ, իրաւագուրկ, յափշտակեալ հոծ զանգուածները: Գահավիժող տնտեսութիւնը, փաստօրէն, հատուածական հասարակութիւնը համախմբեց մէկ դատի եւ մէկ պայքարի շուրջ: Միայն ու միայն ընկերային արդարութիւն եւ ժողովուրդի արդար իրաւունքներու պաշտպանութիւն:

Արդէն այս է պատմութեան շարժիչ ուժը՝ դասակարգային պայքար՝ յանուն արդարութեան: Հինէն եկող, ամենուր պատահող, բայց՝ միշտ կրկնուող պատմութեան հոլովոյթը, երբ ապստամբութիւններ, յեղափոխութիւններ կը սարսեին ամուր կարծուած վարչակարգերու հիմքերը. ի սպառ կը տապալէին արմատակալած եւ նեխած կառավարութիւնները:

«Արարատ» եւ իր շրջանակը, իր էջերով եւ քաղաքական ու ընկերային հայեացքներով, միշտ ալ շեշտած է ընկերային հաւասարութեան անհրաժեշտութեան վրայ, ուր որ ալ ըլլայ ան: Շահածարաւ դրամատիրութեան բարբերն ու անոր ներկայացուցիչներուն անհաշուեւտութիւնը իսկական չարիքներ են բարօրութեան հետամուտ եւ արդար վաստակով օրապահիկի կարօտ դասակարգին համար: Դասակարգ, որ օր մը պիտի պոռթկայ եւ պահանջէ իրմէ խլուած իրաւունքները: Պիտի պահանջէ՝ երբեմն կարծի քայլերով:

Ինչ որ կ'ապրինք այս օրերուն, ճշուած լիբանանցիին բարկաճալթ գայրոյթն է, որ կը գոռայ՝ վե'րջ շահածարաւ վերնախաւին. ես տէրն էմ իմ երկիրն, իմ աշխատանքին, իմ քրտինքին եւ անկոտորում ջատագովը ընկերային արդարութեան:

Կը մնայ սպասել արդիւնքներուն:

«ԱՐԱՐԱՏ»

Արծիւները Դեռ Կը Սաւառնին

Շարունակուած էջ 14-էն

րուն չիշատակը ոգեկոչելով, անմահ հերոսներուն շաւիղով ընթանալով, այդ հիասքանչ գուպարէն դասեր քաղելով ինքնաբերաբար հաստատած կ'ըլլանք, որ 1920 Հոկտեմբերին ինկած արծիւները դեռ կը սաւառնին բարձունքն ի

վեր: Փա՛նք Հաճնոյ հերոսամարտին ինկած նահատակներու խնկելի չիշատակին:

Թող հանգիստ ննջեն անոնք, որոնք հերոսացան քաջօրէն, որովհետեւ անոնց պատգամին ի լուր՝ արծիւները դեռ կը սաւառնին հայօրէն:

SAVE THE DATE

AACCWD Sacred Music Convention & Assembly
Workshops, classes, and more!
Please visit www.aaccwd.com for tickets & full details!
Date: November 8 - 10, 2019
Location: Saint Peter Armenian Apostolic Church
17231 Sherman Way Van Nuys, CA 91406

ԳՐԱԴԾ ԹՈՒՎԿԱՆ

8, 9 եւ 10 ՆՈՅԵՄԲԵՐ 2019 Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի:
Sacred Music Convention and Assembly, եկեղեցական երաժշտութեան համագումար, աշխատանքներ, դասընթացքներ եւ աւելին:
Կազմ.՝ the Association of Armenian Church Choirs of the Western Diocese-ի (AACCWD):
Վայր՝ Ս. Պետրոս Գայգ. Առաք. եկեղեցի, 17231 Sherman Way, Van Nuys, CA 91406:
Յաւելեալ տեղեկութիւններու եւ տոմսերու համար՝ այցելեցէք www.aaccwd.com կայքը:

Քո Մայր Լեզուն Չմոռանաս...

Շարունակում եմ 8-ին

բարակ լարը՝ հնչեղ չէր, դժգոյն էր ու անսիրտ...

Խորհրդային կարգերին բարձրաձայն հակադրուելու պետք չուներ Կապուտիկեանը, նա շատ լաւ գիտեր՝ «Կաթից վառուողը մածոնն էլ է փչելով ուտում»։ Նա գտել էր միջին ճամբայ՝ առանց նեղացնելու մէկին կամ միւսին։ Ազգայինը դարձնելով հիմնական գիծ, իր գրականութեան մէջ հիմնականում կեանքի էր կոչում արտաքուստ անմեղ թուացող թեմաներ. Հայրենիք, սէր, բնութիւն, մայր, երեխայ, քաղաքամայր Երեւան։

Առերեւոյթ, Միլվա Կապուտիկեանը խոշոր, ընդհանրացնող թեմաներ արծարծող բանաստեղծուհի չէ։ Այսինքն՝ գրում է կարծես հանպատրաստի, պահի, դէպքի անմիջական ազդեցութեան տակ։ Մասամբ ընդունելով հանդերձ, նման բնորոշումը նրա քերթողութեան զնախաման առումով, չենք կարող հաստատել, որ Կապուտիկեանը առաջին հայեացքից անմեղ թուացող թեմաների շնորհիւ խոշոր, համամարդկային ընդհանրացումներ էր անում։ Ահա նման գլուխգործոցներից մէկը՝ «Խօսք իմ որդուն» բանաստեղծութեան վերջին երկու տողը.

Թէ մօրդ անգամ մտքիցդ հանես

Քո մայր լեզուն չմոռանաս...

Որդուն ուղղուած նման մի պատգամ, ընդամենը երկու տողի մէջ, որպէս հայրենասիրութեան, հայասիրութեան փառայեղ դիմում ու հրամայական, անթեւ թռչնիկի պէս երեկ, այսօր, վաղը եւ յաւերժ պիտի անպայմանօրէն բուն դնի իւրաքանչիւր հայորդու հոգում՝ ուր էլ որ նա ապրելիս լինի։

Միլվա Կապուտիկեանի հայերգութեան մէջ ներառնուած են Հայաստանն ու նրա գիւղերը, բնութիւնը՝ մարդկանցով, եւ, մանաւանդ Երեւանը՝ իր խէնթուխելառ բնաւորութեամբ, անմիջական, մտերմիկ մարդկանցով լի փողոցներով ու հրապարակներով։ Եւ այդ ամէնի մէջ, իր ողջ կեանքում մեր մայրաքաղաքին սիրահարուած բանաստեղծուհին։

Անձնական սիրոյ հանդէպ կարծես անտարբեր բանաստեղծուհին ահա թէ ինչ նոր գոյնով, նորովի ընկալումով է բարձրացնում մարդ-

կային այդ անմեղ զգացումը.

- Ո՛ւ էլ զնաս, ես քեզ հետ եմ, ես կը գամ

- Ո՛չ, չէս կարող, ինձ չէս կարող մոռանալ։

Դժուար չէ հասկանալ, որ բանաստեղծուհու սէրը հիմնականում անպատասխան սէր է։ Որքան էլ մերժուած, նա պարտաւոր է յորդոր, պատգամ թողնել մարդկանց.

Է՛հ, ի՞նչ արած, բախտը խռով

Թող աշխարհում մեզ չչիշի, Միայն ապրենք մենք սիրելով՝

Թէկուզ ես՝ քեզ, դու՝ ուրիշի...

Անշուշտ, միայն «Մասիաացաւով» տառապող Շիրազը հազիւ թէ երիտասարդ տարիքում կարողանար հասկանալ, թէ ինչպէս իր համար կեանքի ընկեր ընտրած Միլվա Կապուտիկեանը ի գորու է բանաստեղծութեան Մասիաը ելնել ու այնտեղից, վանից մինչեւ Երեւան գովերգել հայ մարդուն, հայ գիրը, հայ լեզուն, հայ քնարերգութիւնն ու այդ ամէնը ամբողջացնող Մայր Հայաստանը։

Ժամանակին, Աստուծոյ բարի, թէ չար կամօք համատեղ կեանքը չստացուեց նրանց մօտ։ Գուցէ բարին դա էր, որովհետեւ հակառակը լինելու պարագային, հազիւ թէ մենք ունենայինք կողք-կողքի երկու հանճարեղ բանաստեղծներ։

Միլվա Կապուտիկեանի արձակ գործերի մէջ առանձնանում են ճանապարհորդութիւնների ընթացքում գրի առած այն գործերը, որոնցում արծարծուած են պիւռքահայ մարդու հոգսերն ու հայրենի երկրի կարօտից օրէօր հիւծուող, բզկտուող հոգին։

Դժբախտաբար, նոյնիսկ այս անկախութեան տարիներին անգամ դեռ «Քարաւանները քայլում են», սակայն, ուզում ենք հաւատալ, որ Քարաւաններն այս անգամ կը քայլեն հետադարձ քայլքով՝ հանգրուանելու համար Արարատի փէշերին՝ ուր նրանք կը հիւսեն իրենց նոր բոցը։

- Դո՛ւ, իմ ժողովուրդ, դու ապրել ես, կ'սս,

Այսպէս՝ ապրելով...

Սեւակեան շնչով գրուած այս երկու տողը բաւարար է Միլվա Կապուտիկեանի անմեկնելի հայրենասիրութեան բնորոշման համար։

Նոր Մարաշէն... Թալապիա

Շարունակում եմ 16-ին

պատուհանին առջեւ դրուած կուժին պճլիկ լեզուակէն օդէն դէպի կոկորդ ջրվիժող սառած, համո՛վ ջուրով, այսօրուան բլաստիք շիշե՛րու ջուրերէն շատ աւելի առողջարար...

Տէտէս, գիւղէն քանի մը քիւլումբթը վեր, բլուրի լանջին, ամէն ամառ, լայն տարածութեամբ նոյն այգին կը վարձէր այս նպատակին համար եւ էլ մըն ալ՝ իբրեւ փոխադրութեան միջոց դէպի այգի ուղղուող արահետներէն։ Շատ օրեր, ես ու քոյրս իշուն կունակը, իսկ երկուորեակ եղբայրներս անոր երկու կողմերէն կախուած անտուկներուն մէջ այգի կ'երթայինք պտոյտի։ Էլը ալ բոց սորված էր տեղը։ Պէջրութիւն այցելուներ կ'ունենայինք յաճախ։

- Գասպար աղա, եկանք խաղողը ուտելու։ Թալապիային խաղողը ուրիշ է։ Կարօտցանք։

- Էլը հոն է, թուզին ծառին կապուած, խանութիւն առջեւ։ Քակեցէ՛ք, թող քալէ, դուք ալ հետեւեցէք, մինչեւ հոն, ուր որ կը կենայ։ Իշտէ անիկա մեր այգին է, կերէ՛ք որքան որ կ'ուզէք, հետերնիդ ալ առէք։ Ես խանութէն չեմ կրնար հեռանալ։

Չոր գովութիւն մը ունէին Թալապիային գիշերները։ Երկիրնքի յստակութիւնը վայելել կուտար աստղերը, երբ որոշ օրեր դուրսը կը քնանայինք, մեր աչքերը՝ անսահման երկնակամարին, Արարչի ստեղծագործութեան զմայլանքով, մինչեւ որ քունը փոխադրէր մեզ երազներու աշխարհ, այսօրուան արդիական ննջարաններէն աւելի բնական ու հանգիստ։ Այո՛, կային անկող հիւրերու այցելութիւնները, կարիճ, սարդ, մուկ, մողէց, օձ եւ միջատներու տեսակները, բայց երբ կը յարգէինք անոնց ապրելու իրաւունքը, առանց իրար անցնելու, անոնք ալ կը ձգէին որ հանգիստ քնանանք...

Խենթ կ'ըլլայինք շոգեկառքին, որ Ռայաքի կեդրոնական կայարանէն կու գար Սասունէլի կայարանը՝ գիւղին հիւսիսը եւ դէպի Տահր էլ Պայտար իր ճամբուն վրայ կը ճեղքէր Թալապիան, կ'անցնէր մեր տան ետեւէն վախազու Ֆշշոցով, ահեղ զանգուածով,

«Դիլիջան» Սենեկային Երաժշտութեան

Շարունակում եմ 13-ին

սենեկային երաժշտութեան համերգաշարը նուիրուած է ցուցադրելու արեւմտեան դասական սենեկային երաժշտութեան աւանդական գլուխգործոցները, ինչպէս նաեւ գոհարներ՝ հայկական երաժշտութեան զանաւարանից։ Նոր

երկրաշարժային ցնցումով։ Հեռուէն երբ ծուխը երեւար, մանկական հետաքրքրութեամբ կը վազէինք մինչեւ երկաթուղագիծ ու ձեռքերը օդին ուրախութեամբ կը բարեւէինք հանքածուխէն սեւցած վարորդները, որոնք միշտ ալ երկու կտրուկ սուլոցներով կը փոխադարձէին մեր հրճուանքը։ Մինչեւ վերջին վախոնին անցքը դեռ կը մնայինք հոն, սեւ, անախորժ ծուխին մէջ, մինչեւ անոր տարտղնուելը գիւղի հովերէն։

Հիմա, շատ, շատ տարիներ անցած՝ այս բոլորին, Մ. Իշխանի «Մնաս Բարով Մանկութիւն»ի զգացումներով ամէն անգամ որ կը վերադառնամ այն վայրերուն, ուր մեր մանկական ոտքերը գետին շոյեցին Նոր Մարաշէն Թալապիա, կը տեսնեմ ժամանակին յառաջացուցած փոփոխութիւնը, ամէնուրեք։ Ո՛չ Գասպար աղա, ո՛չ մեր տունը, ո՛չ բաղնիքները, ո՛չ մայրս ու հայրս, ո՛չ սիմենթ ձամբան, ո՛չ «Անդր Նահրի հայութեան հոծ լոյս կեդրոն դպրոց»-ը՝ Քառասուն Մանկանցը, ո՛չ Սեդրակ Զաւէն, ո՛չ Զարեհ Զարգուն, ո՛չ Էմմի Օղլու, ո՛չ «Զաքարիա փոստա»-ն եւ ոչ ալ՝ շոգեկառքը...։ Ամէնքն ալ կը պատկանին անցեալի քաղցր, պարզ, անմեղունակ օրերուն, որքան ալ որ հիմա կը ճօճուինք աւելի բարօր, փարթամ ու ճոխ կեանքի մը օրօրոցին մէջ։

Ի՞նչ է գիւրը այդ կեանքին սակայն։ Հեւքոտ վազքը՝ այս անգամ համաշխարհայնացումի եւ արդիականութեան բեմահարթակին վրայ, համացանցէն մինչեւ բջիջային, քաղաքական խաղերէն մինչեւ տնտեսական տազնապներ, ազգային մտահոգութիւններէն մինչեւ զաւակներու ապագայ, հայր պայքարէն մինչեւ առողջական հարցեր, գերարդիական ինքնաշարժներու խառնարան պողոտաներէն մինչեւ օդակայաններու թռչուեցոհ, անբաւարարութեան քմահաճոյքէն մինչեւ գիրար գերազանցելու մրցակցական կամապաշտութիւն։ Երեւոյթներ, որոնք կը կլանեն մեր աւօրեան, տուն տալով այդ անվերջ «stressful» վազքին, վա՛զք, վա՛զք, վա՛զք, հասնելու համար ո՞ւր...

Հոն, ուր որ էի՞նք երէկ։ Թերեւս։

Երեւանի Պետական Համալսարանը

Շարունակում եմ 15-ին

րութիւններ կատարելով վերոյիշեալ բոլոր բնագաւառներուն վերաբերեալ, հրատարակելով գանոնք եւ սփռելով Խորհրդային Միութեան միւս հանրապետութիւններէն ներս որպէս ակադեմիական տուրք եւ իմացական ու մտաւորական ատաղձ։

Առաջին երկու տասնամեակներուն Համալսարանը հազարէ աւելի գիրք եւ գիտական հանդէսներ հրատարակած է, ինչպէս «Բանբեր Երեւանի Համալսարանի», «Գիտական Տեղեկագիր», «Երիտասարդ Գիտաշխատող», եւ «Երեւանի Համալսարան» պարբերաթերթերը։ Հայերու կողքին արտասահմանէն, նոյնիսկ օտարագրի ուսանողներ ակնառու թիւ մը կը կազմէին Պետական Համալսարանէն ներս։ Սփիւռքէն հայ ուսանողներ դարձան բժիշկներ, ճարտարագէտներ, երաժշտագէտներ, եւ ուսու-

ցիչներ ու վերադառնալով ուղղեցիցին արտասահմանի խոպան դաշտերը։

Երկու Հսկայ Հայագետներ Գարեգին Ա Կաթողիկոս եւ Յ. Մանանդեան

Դպրեվանքի Ընծայարանի Ա. կարգի ուսանող էի երբ դասի պահուն մատենագրութեան մեր ուսուցիչը Սիմոն Սիմոնեան տեղեկացուց դարասկիզբի ներհուն բանասէր եւ պատմագէտ Յակոբ Մանանդեանի մահը, 79 տարիքին, պատահած Երեւանի մէջ 1952 Փետրուարին։ Սիմոնեանէն մնացուն կերպով կը լսէինք նոյն անունը յարատեւ իր լիաբուռն թավ ձայնով եւ շեշտով, բայց այս վերջին անգամ ցաւով եւ ափսոսանքով, միշտ չիշեցնելով մեզի անպայման կարողալ յայտնի պատմագէտ փրոֆեսորին «Քննական Տեսութեան» Հայ ժողովուրդի Պատմութեան» չորս հատորեակը որպէս հայ դասական

երաժշտութեանը ուժգին հաւատացող համերգաշարը իր հիմնադրութեան օրուանից պատուիրել եւ ներկայացրել է արդէն 54 գործեր։ Յաւելալտեղեկութիւնների եւ տոմսերի համար կը խնդրենք ա յ ց ե լ ե լ www.dilijan.larkmusicalsociety.org. կայքը։

մեր ուսուցչին Սիմոն Սիմոնեանի վրայ որ հանգուցեալ Հայրապետին կողմէ իրեն որպէս գիտական աշխատակից կարգած էր 1946 թուականին ի վեր երբ Հայրապետը պիտի հրատարակէր իր մեծածաւալ «Յիշատակարանք Ձեռագրաց» հատորը։ Ուսանողներս անուղղակիօրէն մտաւոր կապ մը կը հաստատէինք Երեւանի Պետական Համալսարանին հետ իմանալով երկու հայագէտ հիմնադիրներու վախճանումի մասին, յատկապէս Երանաշնորհ Տ.Տ. Գարեգին Ա Յովսէփեանց Կիլիկիոյ Կաթողիկոսին։ Երկուքն ալ, ինչպէս չիշեցի, եղան հիմնադրի գիտնականները Երեւանի Պետական Համալսարանին։ Երկուքին մահը ծանր կը ճնշէր

ՄԱՐՁԱԿԱՆ

«Լիւերպոլը» Խուսափեց Պարտությունից «Մանչեսթեր Յունայթեդի»-ի Հետ Խաղում



Անգլիայի Պրեմիեր լիգայի 9-րդ տուրի կեդրոնական խաղում առաջատար «Լիւերպոլը» հիւրընկալուել էր «Մանչեսթեր Յունայթեդին»:

Հանդիպումն Աւարտուել է ոչ-Ոքի՝ 1:1:

Խաղի 36-րդ րոպէին Մարկուս Ռեշֆորդը բացել է հաշիւը: Մերսիսայդեան թիմի ֆուտպոլիստները պատասխան կոլը խփել են հիմնական ժամանակի աւարտից 5 րոպէ առաջ. աչքի է ընկել Ադամ Լալանան:

«Լիւերպոլը» առաջին միաւորները կորցրեց ընթացիկ առաջնութիւնում: Այս ոչ-օքից յետոյ Կլոպի գլխաւորած թիմը 25 միաւորով է գլխաւորում մրցաշարային աղիւսակը, Սուլշերի գլխաւորած թիմը 10 միաւորով 13-րդն է:

«Չելսին» Յաղթանակ Տարաւ, «Տոտենհեմը» Խուսափեց Պարտութիւնից

Անգլիական Պրեմիեր լիգայի 9-րդ տուրում Լոնտոնի «Չելսին» հիւրընկալեց «Նիւքասլին»: Ֆրենկ Լեմպարդի գլխաւորած թիմը յաղթանակ տարաւ նուագագոյն՝ 1:0 հաշուով:

«Չելսի» յաղթական կոլը խաղի 73-րդ րոպէին խփեց սպանացի պաշտպան Մարկուս Ալունսոն:

«Չելսին» 17 միաւորով այժմ երրորդն է մրցաշարային աղիւսակում, իսկ «Նիւքասլը» 8 միաւորով 18-րդ տեղում է:

Միաժամանակ ընթացող «Տոտենհեմ» - «Ուոլթֆորդ» խաղում Մաուրիսիո Պոչետինոյի գլխաւորած թիմը խաղի վերջին րոպէներին խուսափեց պարտութիւնից:

«Ուոլթֆորդի» կազմից աչքի ընկաւ ֆրանսացի կիսապաշտպան Աբդուլլայէ Դուկուրեն, իսկ «Տոտենհեմի» միակ կոլը խփեց անգլիացի կիսապաշտպան Դեյվ Ալին:

Սարգիս Ադամեանը Մասնակցեց «Հոֆենհայմի» Յաղթանակին



Գերմանիայի առաջնութեան 8-րդ տուրում «Հոֆենհայմը» տանը մրցեց «Շալկէի» հետ եւ յաղթանակ տարաւ 2:0 հաշուով:

71-րդ րոպէին հաշիւը բացեց խորուսթ յարձակուող Անդրեյ Կրամարիչը, իսկ 86-րդ րոպէին կրկնապատկեց Տոգոյի ներկայացուցիչ Իլա Բեբուն:

Հայաստանի հաւաքականի յարձակուող Սարգիս Ադամեանը «Հոֆենհայմի» մեկնարկային կազմում էր եւ փոխարինուեց 62-րդ րոպէին:

«Հոֆենհայմը» 11 միաւորով 11-րդ տեղում է: «Շալկէն» 7-րդն է՝ 14 միաւոր:

Արմէն Գիւլբուդաղեանը Հրաժարական է Ներկայացրել Հայաստանի Հաւաքականից

Հրաժարական է ներկայացրել Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչ Արմէն Գիւլբուդաղեանը: Ըստ մասնագէտի՝ հրաժարականի պատճառն այն է, որ Հայաստանի հաւաքականը չի կարողացել նուաճել Եւրօ 2020-ի եզրափակիչ փուլի ուղեգիր:



«Մէկ տարի է՝ զբաղեցնում եմ Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզչի պաշտօնը: Այս ընթացքում եղել են թէ՛ ուրախութեան, թէ՛ տխրութեան պահեր՝ կապուած հաւաքականի ելոյթներին հետ: Ընտրական փուլը դեռ չի աւարտուել, բայց հաւաքականի գլխաւոր մարզչի պաշտօնից հեռանալու բարդ որոշում եմ կայացրել, քանի որ չեմ կարողացել արդարացնել Հայաստանի հաւաքականի երկրպագուների յոյսերը՝ թիմին դուրս բերել Եւրոպայի առաջնութեան եզրափակիչ փուլ: Այժմ մեր հնարաւորութիւնները միայն տեսական են, եւ, չնայած իմ առջեւ ի սկզբանէ նման խնդիր չէր դրուել, միշտ զգացել եմ պատասխանատուութիւնը»:

«Շիրակը» 10 Ֆուտպոլիստով Յաղթեց «Արարատին»

Ֆուտպոլի Հայաստանի բարձրագույն խմբում կայացաւ 11-րդ տուրի կեդրոնական խաղը:



Աղիւսակի 2-րդ տեղում գտնուող Գիւմրիի «Շիրակը» սեփական դաշտում հիւրընկալեց մրցաշարի միանձնեայ առաջատար «Արարատին»: Խաղն աւարտուեց տանտէրերի յաղթանակով՝ 2:1, չնայած նրանք հանդիպումն աւարտեցին 10 խաղացողով:

Խաղի 23-րդ րոպէին «Շիրակի» իվուարցի յարձակուող Մորի Կոնեն առաջինը գրաւեց հիւրերի դարպասը: Երկրորդ կէսի 55-րդ րոպէին արարատցի ժոնիոր դէ Մելոն վարականգնեց հաւասարութիւնը: 68-րդ րոպէին տանտէրերը մնացին 10 խաղացողով, քանի որ կարմիր քարտով դաշտից հեռացուեց պաշտպան Մարկո Պրիցելիչը:

Այս յաղթանակից յետոյ «Շիրակը» վաստակեց 22 միաւոր եւ հաւասարուեց «Արարատին»:

«Ռոման» Չկարողացաւ Յաղթել Յետնապահին

Իտալիայի առաջնութեան 8-րդ տուրում «Ռոման» հիւրընկալուեց «Սամպորիային»: Դարպասի գրաւում չգրանցուեց՝ 0:0:

Աճուկի մկանային վնասուածքից յետոյ վերականգնուող Հենրիխ Մխիթարեանը չպատուարուած չէր «Ռոմայի» կազմում:

«Ռոման» 13 միաւորով 6-րդ տեղում է, «Սամպորիան» վերջինն է՝ 4 միաւոր: Առաջատար «Եուվենտուսն» ունի 22 միաւոր:

Իբրահիմովիչը Չի Հերթել, Որ Ձմրանը Կը Հեռանայ «Լոս Անճելոս Կելսօսից»

ՄԼՄ-ի կանոնաւոր առաջնութիւնը ներկայացնող «Լոս Անճելոս Գելսօսի» շուեղ յարձակուող Ջլատան Իբրահիմովիչը չի հերթել եւրոպական ֆուտպոլ վերադառնալու մասին լուրերը:

«Այժմ ոչինչ ասել չեմ կարող: Իմ պայմանագիրը «Լոս Անճելոս Գելսօսի» հետ նախատեսուած է մինչեւ Դեկտեմբերի 31-ը: Ես յարգում եմ իմ ակումբը եւ աւելին ասել չեմ կարող», - ասել է շուեղ յարձակուողը:

Աւելի վաղ յայտնի էր դարձել, որ Իբրահիմովիչի հետ բանակցութիւններ է վարում իտալական «Ֆիորենտինան»:

«Մալիորկա» - «Ռեալ Մադրիդ»՝ 1:0.

Ֆուտպոլի Սպանիայի առաջնութեան 9-րդ տուրում Մադրիդի «Ռեալն» արտագնայ խաղում մրցեց այս մրցաշրջանում Լա Լիգա վերադարձած «Մալյորկայի» հետ: Զինեղին Զիդանի գլխաւորած թիմն անակնկալ պարտութիւն կրեց:

«Մալյորկան» յաղթական կոլը խաղի 7-րդ րոպէին խփեց Կոստ Դ'Իվուարը ներկայացնող յարձակուող ժոնիոր Լագոն:

«Ռեալն» այժմ 18 միաւորով երկրորդն է մրցաշարային աղիւսակում: Առաջատարը կատալոնական «Բարսելոնան» է՝ 19 միաւորով:



**Զօրացիւք
Օժանդակե՛ք
Փրկե՛ք**

Syrian Armenian Relief Fund
P.O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

